Ազգ
Azg
23 ՓԵՏՐՈՒԱՐ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 33(4885)
ISSN: 1829-1651
9 771829 165003 12033

# Բութ են եւ «չատակեր»

Ադրբեջանի զինդատախազ Խանլար Վելիեւը տեղեկացրել է, որ «Խոջալուի «ցեղասպանության էպիզոդով» (ցեղասպանությունն՝ էպիզո՞դ-Վ. Ա.) քրեական գործով այս պահի դրությամբ (դեպքերից 20 տարի անց-Վ. Ա.) ցուցմունքներ են վերցվել 3 հազար հոգուց՝ որպես վկաներից, 2 հազար հոգի ճանաչվել է տուժած, անցկացվել է ավելի քան 800 փորձաքննություն»:

Որտեղի՞ց է Խանլար Վելիեւը գտել «3 հազար վկա»: Սա ամենեւին էլ հռետորական հարց չէ: Բանն այն է, որ 1992թ. փետրվարի 27-ին Աղդամում Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդովը եւ «քաղաքի դատախազ» Աքաֆիշի Աքաֆիշիեւը մամուլի ասուլիս են կազմակերպել տեղական եւ արտասահմանցի լրագրողների համար: Հարցին, թե Խոջալուի ««7 000 բնակիչներից» որքա՞նն էր մնացել փետրվարի 25-ի դրությամբ», Էլման Մամեդովը պատասխանել է՝ «մոտավորապես 2-2,5 հազարը»:

Տես էջ 8

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հարատեւ կռիվ

Դաշնակցական բառարանից վերցված այս վերնագիրը կապ չունի... Դաշնակցության հետ: Ավելի ճիշտ՝ այս պարագայում կապ ունի այնքան, որքան Հայաստանի յուրաքանչյուր բնապահպան, բնապաշտպան, բնասեր քաղաքացու հետ:

Այս էլ քանիերորդ անգամ այդ քաղաքացիները կռիվ են տալիս մայրաքաղաքի, ինչպես մյուս քաղաքների, այս կամ այն կանաչ տարածքի կառուցապատման, ասֆալտապատման, փաստացի ոչնչացման դեմ: Օղակաձեւ զբոսայգու տարբեր հատվածներ, Հաղթանակի զբոսայգի, Ուսանողական այգի—այս բոլորը երկարատեւ, բուռն պայքարների թատերաբեմ դարձան եւ ավարտվեցին պայքարողների ամբողջական կամ մասնակի պարտությամբ: Հաղթեց փողը, փողատերը, ինչպես նաեւ քաղաքի բյուջեն: Այժմ հերթը Մարգարյան ծննդատանը (Մաշտոցի պողոտա) հարող այգունն է. պայքարողներն այս անգամ զինված են նախկին՝ դառն փորձառությամբ, իսկ քաղաքային իշխանությունները՝ օրենքի իշխանությամբ կամ իշխանական օրենքով խնդիրը կարգավորելու հմտությամբ, ի տարբերություն նախկին դեպքերի, երբ զոռբայությամբ էին լուծվում հարցերը:

Այս վերջին պարագան դեռեւս չի կարող առիթ հանդիսանալ պնդելու, որ կանաչ տարածքների համար պայքարողները այս անգամ մոտ են հաջողությանը: Ամենեւին: Նրանք, ինչպես քաղաքային իշխանությունները, շարունակելու են կռիվը, պարզապես հետզհետե ավելի կատարելագործված ձեւերով ու միջոցներով, այնքան ժամանակ, որ Հայաստանում քաղաքային, համայնքային թե համապետական ընտրությունները հիմնված չեն լինի հասարակական կարծիքի եւ քաղաքացիական պահանջների վրա: Ավելին՝ այդ պայքարը շարունակվելու է միշտ, քանի որ քաղաքային իշխանությունները, ինչպես կառավարությունները, միշտ պետք ունեն ու պիտի ունենան նյութական ավելի լայն միջոցների, ավելի մեծ բյուջեների, իսկ հասարակությունը, ավելի շուտ՝ նրա ակտիվ հատվածները, պիտի ձգտեն էկոլոգիապես ավելի լավ, ավելի առողջ պայմաններում ապրելու:

Նույնն է պարագան Սեւանի, Ալավերդու, Քաջարանի, Կապանի եւ վերջինը՝ Թեղուտի պաշտպանության համար մղվող առավել ծանրակշիռ ու բարդ պայքարներում:

Եվ այս երեւույթը մեզահատուկ չէ:

Նույնիսկ Մեծ Բրիտանիայի նման զարգացած դեմոկրատիա ունեցող երկրում ընդունված հավասամք է՝ Շրջակա միջավայրի պաշտպանությունը շատ լուրջ հարց է քաղաքական ու պետական գործիչներին վստահելու համար...

Այլ խոսքով՝ մինչ իշխանությունները ծակատագրված են, նաեւ ի հաշիվ շրջակա միջավայրի, ջանքերը չխնայել՝ եթե ոչ իրենց գրպանի, ապա գեթ համայնքային, քաղաքային կամ պետական բյուջեն լցնելու, ապա քաղաքացիական հասարակության պարտականությունն է հարատեւ կռիվ տալ իր եւ հետագա սերունդների մաքուր միջավայրում ապրելու իրավունքի համար:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Սոցիոլոգ. ՀՀԿ-ն խորհրդարանում մեծամասնություն չի լինի

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ Գեւորգ Պողոսյանը առաջիկա խորհրդարանական ընտրությունների գլխավոր առանձնահատկությունն անվանում է ՀՀԿ եւ ԲՀԿ հակամարտությունը: «Նրանք երկուսն էլ իշխանություն են, սակայն պայքարելու են միմյանց դեմ: Հիմնական դերակատարները ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն ու ՀԱԿ-ն են: Հասարակության տրամադրությունը պարզելու նպատակով ասոցիացիան հարցում է անցկացրել, զրուցել են 1000 հոգու հետ: Պարզվել է, որ հարցվածների 75 տոկոսը հենց վերնշյալ 3 կուսակցություններին է ընտրելու: Խորհրդարան մտնելու համար ՀՅԴ, ՕԵԿ, «Ժառանգություն» կուսակցությունները պետք է պայքարեն մնացյալ 25 տոկոսի ձայնի համար:



Ըստ Պողոսյանի՝ այս տարի բնակչության մասնակցությունը կլինի 55 տոկոս: Քաղաքացիական ակտիվության մակարդակն է բարձրացել: Սոցիոլոգի բնութագրմամբ՝ այսօր հայ ընտրողն առավել պահանջկոտ է, առավել քննադատաբար է մոտենում իշխանություններին: «Ընտրողը փոխվել է, իշխանություններին հեշտ չի լինի այս անգամ գոհացնել, ու հենց այդ պատճառով նոր խորհրդարանում ՀՀԿ-ին չի հաջողվի մեծամասնություն կազմել: Նա չի հավաքի 50 եւ անց տոկոս», ասում է նա՝ հավելելով, որ առավել հետաքրքրական կլինեն ընտրություններից հետո անակնկալ կոնֆիգուրացիաները:

Պողոսյանի ներկայացմամբ՝ ընտրողների մեծամասնությունը չի հավատում արդար ընտրությունների անցկացմանը: Հաճախ ընտրողներն առաջնորդվում են ոչ թե կուսակցության անդամների կամ կուսակցության ծրագրերով, առաջարկություններով, այլ կուսակցության առաջնորդով: Թե ինչպես է ստացվում, որ ընտրողների մեծամասնությունը չի հավատում ընտրությունների արդար անցկացմանը, սակայն ձայնը տալիս է իշխանությանը, սոցիոլոգը բացատրում է հայ ընտրողի առանձնահատկությամբ: «Նրանք, ովքեր ձայն են տալիս ԲՀԿ-ին, իշխանության մեջ որոշակի փոփոխությունների ակնկալիքներ ունեն, նրանք, ովքեր ՀՀԿ-ին են ձայն տալիս, գոհ են իշխանություններից», ասում է Պողոսյանը:

Հայտնի քաղաքական գործիչներով կուսակցությունների կազմի համալրումը նա նմանեցնում է ֆուտբոլային տրամաբանությանը, երբ այլ ակումբներից հայտնի լեգեոներների են հրավիրում: «Սա աշխատող մեթոդ է», ասում է Պողոսյանը՝ ընդգծելով, որ Վարդան Օսկանյանի ընդգրկումը ԲՀԿ-ում միանշանակ օգուտ է կուսակցությանը: Նրա մեկնաբանությամբ, թեպետ ՀԱԿ-ն իր պայքարով որեւէ արդյունքի չհասավ ոչ իշխանափոխության, ոչ արտահերթ ընտրությունների առումով, այնուամենայնիվ, նա էլ մեծ արձագանքողներ ունի, որովհետեւ դժգոհությունները, խնդիրները շատ-շատ են:

Հ. Հ.

# Մաշտոցի այգու շինարարությունը ժամանակավորապես դադարեցվեց

Թեպետ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը նախօրեին հնչեցրած իր հայտարարությունում հավաստիացրել էր, որ Մաշտոցի պողոտայում տեղադրվող կրպակներն օրինական հիմքերի վրա են, եւ այգու ծառերը չեն վնասվում, երեկ ցերեկը այգում շինարարությունը ժամանակավորապես դադարեցվեց: Ոստիկանության Երեւանի վարչության հասարակական կարգի ապահովման բաժնի հաղորդմամբ՝ կրպակների տեղադրումը դադարեցվում է մինչեւ շաբաթվա վերջ: Ի տարբերություն վերջին մի քանի օրերի, երեկ այգում հատուկենտ ոստիկաններ կային: Քիչ չէին նաեւ բնապահպանները, ովքեր արժանահավատ չհամարելով ոստիկանության հայտարարությունը՝ փոխնիփոխ հսկում էին այգին: Նրանց մեկնաբանությամբ՝ ոստիկանության գործողությունները դառնում են անկանխատեսելի, եւ այս քայլով նրանք փորձում են ժամանակավորապես դադարեցնել լարվածությունը: Թեպետ շինարարությունը դադարեցված է, սակայն ակտիվիստները հավաստիացնում են, որ շարունակելու են գալ այգի, հերթապահել, հսկել, մինչեւ քաղաքապետարանը հայտարարի, որ կասեցնում է շինարարությունը: «Վստահություն չկա: Մի քանի անգամ մեզ ասացին «ո՛չ, գիշերով շինարարություն չի լինի, բայց տեսաք ինչ եղավ, կեսգիշերին բալգարկան բերեցին, սկսեցին բուտիկները տեղադրել», ասում էին ակտիվիստները: Այգու երկու հատվածներում տեղադրվել են մոտ 10 գրեթե ավարտուն տեսք ունեցող կրպակներ:




Մաշտոցի այգու խնդրի վերաբերյալ այսօր Հանրային խորհրդում նախատեսվում է հանդիպում-քննարկում, որին ներկա կլինեն ՀԽ նախագահ Վազգեն Մանուկյանը, բնապահպաններ, ճարտարապետներ, մտավորականներ: Հրավեր է ուղարկվել նաեւ քաղաքապետարանին, բնապահպանության, քաղաքաշինության նախարարություններին:

Հ. Հ.

## Հիշատակի միջոցառումներ Փարիզում

Փետրվարի 26-29 Ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհուրդը կազմակերպում է միջոցառումների շարք՝ նվիրված Սումգայիթյան ջարդերին զոհ գնացած ադրբեջանահայության հիշատակի 24-րդ տարելիցին:

Ամսի 26-ին զոհերի հիշատակին նվիրված պատարագ կլինի Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական առաքելական եկեղեցում: Նույն օրը ծաղկեպսակներ կդրվեն Փարիզում Կոմիտասի հուշարձանին: Ամսի 27-ին կլինի հանրահավաք Փարիզի 9-րդ թաղամասի քաղաքապետարանում՝ ներկայությամբ ԼՂՀ մշակույթի նախարարի: Իսկ ամսի 29-ին «Խաղաղություն Ղարաբաղին» միջոցառումների շրջանակում կկազմակերպվի քննարկում Ֆրանսիայի Ազգային Ժողովում:

Ի. Պ.

## Սիրիայում սպանվել են արեւմտյան 2 լրագրողներ

Սիրիական Հոմս քաղաքում, BBC-ի փոխանցմամբ, երեկ սպանվել են երկու արեւմտյան լրագրողներ: Այս տեղեկությունը հաստատել է Ֆրանսիայի կառավարությունը: Մահացել են բրիտանական Sunday Times-ի լրագրող Մերի Քոլվինն ու ֆրանսիացի լրագրող Ռեմի Օշլիկը: Քաղաքում պայթյունից մահացել են մի քանի մարդիկ եւս, ըստ տեղեկությունների՝ առնվազն եւս երեք լրագրողներ վիրավորվել են: BBC-ի տեղեկացմամբ՝ լրագրողները զոհվել են երեկ առավոտյան. մամուլի կոնֆերանսների համար նախատեսված տան դիմացի այգում մի քանի արկեր են նետվել: Մնացած լրագրողները փորձել են դուրս գալ վերոհիշյալ վայրից: Դեպքի առիթով Փարիզում Ֆրանսիայի ԱԳ նախարար Ալեն Ժյուպեն հայտարարել է, որ կանցկացվի հետաքննություն:

# «Հունաստանը թող կղզիներ վաճառի Թուրքիային»

Այդ մասին «Պրոֆիլ» հանդեսին տված հարցազրույցում, ինչպես երեկ նշել էր թուրքական հանրային հեռուստատեսությունը, հայտարարել է Ավստրիայի առեւտրի պալատի նախագահ Քրիստոֆ Լեյթլը: Նա ասել է. «Թուրքիան կարող է հետաքրքրվել այն կղզիներով, որոնք չափազանց մոտ են իր ափերին եւ անմարդաբնակ: Դրանով Հունաստանը ցույց կտա իր տարածքից թեկուզ խորհրդանշական մի կտոր զիջելու պատրաստակամություն»:

Ավստրիայի առեւտրի պալատի նախագահը լրագրող Յոզեֆ Ռիդլի «Դուք լո՞ւրջ եք ասում» հարցին ի պատասխան ասել է, որ միանգամայն լուրջ է, Հունաստանի այս քայլը կնպաստի Կիպրոսի հիմնախնդրի կարգավորմանը, կլինի նաեւ փոխհատուցումն այն օգնության, որը երկիրը փրկել է սնանկացումից:

Երբ լրագրողը հիշեցրել է Քրիստոֆ Լեյթլին, թե Թուրքիան օգնության փաթեթին չի մասնակցել, հետեւաբար իր առաջարկը կնսեմացնի Հունաստանին, ապա նա ընդգծել է. «Հարցին այդ տեսանկյունից մոտենալու դեպքում՝ իրավացի եք: Սակայն կարելի է հակադիր մոտեցում ցուցաբերել եւ մտածել Եվրոպայի աջ ծայրահեղականների վրա Հունաստանի այդպիսի քայլի հնարավոր ազդեցության մասին»: Ըստ Լեյթլի, հույները դրանով ինքնավստահություն են ձեռք բերելու, հետեւաբար կղզիների վաճառելու առաջարկով Հունաստանը պետք է դիմի Թուրքիային:

Առեւտրի պալատի նախագահի այս խոսքերին բուռն հակազդեցությամբ արձագանքել է Ավստրիայում Հունաստանի դեսպան **Թեմիստոկլես Դիմիդիսը**, ասելով. «Այդ խոսքերն ինձ վշտացրել են, չար կատակի բնույթ են կրում, Հունաստանը երբեւէ չի կարող հրաժարվել իր կղզիներից»: Ի դեպ, Քրիստոֆ Լեյթլը Ավստրիայի քաղաքական կյանքում կարեւոր դերակատարներից է, ժամանակին առաջադրվել էր երկրի նախագահի թեկնածու:

Հ. Չ.

# Ստվերային աշխատանքը՝ ապօրինի, բայց հանդուրժելի երեւույթ

Թաքնված զբաղվածությունը թեեւ անօրինական երեւույթ է, սակայն դրա հանդեպ հանդուրժող են և՛ աշխատողները, և՛ պետական մարմինները, իսկ գործատուների համար ստվերային աշխատուժը հաճախ անգամ ձեռնտու է:

Եթե չկա պայմանագրային աշխատանք, ապա առանց գրանցման ու պայմանագրի աշխատանքը դառնում է ավելի գերադասելի, քան գրանցված կամ չգրանցված գործազրկությունը: Ներքին փոխհամաձայնությամբ գործատուն ընդառաջում է աշխատողին, իսկ վերջինս՝ ընդունում ստվերային աշխատանքը: Այս դեպքում գործատուները պետությանը հարկեր ու սոցիալական վճարներ չեն մուծում: Առանց աշխատանքային պայմանագրի աշխատողն աշխատանքային ստաժ չի ստանում, բայց կարողանում է գումար աշխատել, ինչն այսօր շատ աշխատողների համար ավելի կարեւոր է, քան աշխատանքային ստաժն ու հետագա կենսաթոշակը:

Նույնիսկ լինում են դեպքեր, երբ աշխատողը համաձայնում է աշխատել առանց պայմանագրի, պայմանով, որ սոցիալական վճարի ու եկամտահարկի համար նախատեսված գումարը եւս գործատուն վճարի իրեն, այլ ոչ թե պետությանը: Աշխատատեղերի սակավության պարագայում թաքնված զբաղվածությունը շատերի համար դարձել է արդարացված լուծում:



Թաքնված զբաղվածությունն աշխատանքային այն հարաբերությունն է, որն ամրագրված չէ օրենքով սահմանված աշխատանքային պայմանագրով:

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թաթուլ Մանասերյանն** ասում է՝ անցումային տնտեսություն ունեցող երկրներում ստվերային զբաղվածությունն օրինաչափ երեւույթ է: Այսինքն՝ օրինաչափ է եւ Հայաստանի համար:

Տրամաբանական է, եթե երկրում կա ստվերային տնտեսություն, կլինի եւ ստվերային զբաղվածություն: Ըստ պարոն Մանասերյանի՝ Հայաստանում ստվերային տնտեսության տեսակարար կշիռը շուրջ 70-75 տոկոս է: Թե որքա՞ն է թաքնված զբաղվածների թիվը, որեւէ կառույց ճշգրիտ ասել չի կարող. «Քանի որ մենք չգիտենք նախ գործազուրկների ճշգրիտ թիվը, հետեւաբար չենք կարող ճշգրտել պաշտոնական զբաղվածության, ապա նաեւ թաքնված զբաղվածության թիվը», ավելացնում է Թաթուլ Մանասերյանը:

Աշխատանքի պետական տեսչությունը նույնպես չունի թաքնված զբաղվածության մոտավոր վիճակագրություն: Տեսչությունը ստվերային աշխատանքի վերաբերյալ դիմում բողոքներ ստանում է, սակայն՝ երբեմն:

«Բայց եթե գործատուն ու աշխատողն ունեցել են ներքին պայմանավորվածություն ստվերային աշխատանքի համար, ապա աշխատողի շահերը պաշտպանելիս պետական մարմինը դառնում է կաշկանդված: Լավագույն դեպքում կարող ենք տուգանել գործատուին ու վերականգնել ընդամենը մի տարվա աշխատանքային ստաժը», ասում է աշխատանքի պետական տեսչության պետ **Հակոբ Մանուկյանը**:

Տուգանքի չափն առանձնապես բարձր չէ, մեկ թաքնված աշխատողի դեպքում գործատուն տուգանվում է 110 հազար դրամ: Տուգանքի այս չափն արդեն խոսում է հանդուրժող վերաբերմունքի մասին:

Հակոբ Մանուկյանը նշում է՝ թաքնված զբաղվածության դեպքերը շատ են տրանսպորտի, սպասարկման ու ժամանցային ոլորտներում: Տեսչությունն անցյալ տարի ստուգում է կատարել տաքսի ծառայություններ մատուցող 92 կազմակերպություններում (Taxi-service) եւ հայտնաբերել 673 անօրինական աշխատող:

Իսկ Թաթուլ Մանասերյանն ավելացնում է՝ ստվերային զբաղվածությունն ամենաշատը շինարարության ոլորտում է, որտեղ միայն մի հոգին գրանցվում է որպես շինարարություն իրականացնող անհատ ձեռնարկատեր, սակայն նույն շենքի կառուցման վրա առանց գրանցման աշխատում են շինարարական տասնյակ խմբեր:

Ըստ պարոն Մանասերյանի՝ միայն շինարարության ոլորտում թաքնված զբաղվածությունը կազմում է շուրջ 90 տոկոս, այսինքն՝ աշխատողների շուրջ 90 տոկոսն աշխատում է ստվերում:

Ծառայությունների ոլորտը եւս ռիսկային է, որտեղ ստվերային աշխատանքն անգամ չարաշահում են: Քիչ չեն դեպքերը, երբ երիտասարդներին առանց պայմանագրի ընդունում են աշխատանքի ու 1-2 ամիս հետո ասում՝ խանութից ապրանքներ են պակասում, այդ պատճառով վճարել չենք կարող:

Թաթուլ Մանասերյանը եզրակացնում է. «Ստվերային զբաղվածությունից առաջին հերթին տուժում է աշխատողը, ապա պետական բյուջեն, որտեղ հարկեր չեն մուծվում»:

Թաքնված զբաղվածություն կա նաեւ եվրոպական զարգացած երկրներում, քանի որ այնտեղ եւս կա ստվերային տնտեսություն: Թե ինչպե՞ս է պետք կրճատել ստվերային տնտեսությունը, տնտեսագետը մեջբերում է Վրաստանի փորձը, որտեղ բարեփոխումների արդյունքում օրինապահ ու հարկման դաշտում աշխատող գործարարներին պետությունը տալիս է արտոնյալ վարկեր: Ընդհանուր առմամբ՝ Վրաստանում գործարարների համար նախընտրելի է դարձել հարկման դաշտում աշխատելը, ոչ թե շահույթները թաքցնելը: «Այնտեղ սահմանված պատժամիջոցներն էլ բավականին խիստ են: Եվ հիմա Վրաստանում շարունակվում է ստվերային տնտեսության կրճատումը», հավելում է պարոն Մանասերյանը:

Կարճ ժամանակում թաքնված զբաղվածությունը հնարավոր չէ կրճատել, բայց հետեւողական աշխատանքի կարեւոր քայլերը հետեւյալն են՝ իրականացնել ավելի խիստ պետական վերահսկողություն եւ ստեղծել գրավիչ միջավայր գործարարների օրինական աշխատանքի համար:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Կրթական ռոբոտիքսը զարգացնում է ստեղծարար միտքը

Երեկ ավարտվեց «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում կազմակերպված «Թումո Ռոբոտիքս» դասընթացը:

«Թումո» կենտրոնից տեղեկացան՝ դասընթացն անցկացվել է փետրվարի 10-22-ը, մասնակցել են 12-18 տարեկան 60 պատանիներ:

Դասընթացի շնորհիվ նրանք սովորել են՝ ինչպես ծրագրավորել ու կառավարել ռոբոտը: Թիմերի բաժանված մասնագետները ստեղծել ու ծրագրավորել են նաեւ իրենց ռոբոտը:

Թե ինչքանո՞վ է կարեւոր է կրթական ռոբոտիքսը, սրան իր «Mindstorms» գրքում անդրադարձել է պրոֆեսոր Սեյմուր Փեյփերթը. «Այն կարող է դառնալ շատ հարմար փորձադաշտ, որտեղ կարելի է դրսեւորել ստեղծարար մտածողություն եւ զարգացնել սեփական նախաձեռնությունը»:



*Լուսանկարը՝ «Թումո» կենտրոնի*

Դասընթացը վարելու համար մասնագետ էր հրավիրվել Իսպանիայից, մասնագիտությամբ ճարտարապետ Ձուզեպ Ֆարգասը:

**Ի. Պ.**

ԵՎՐԱՆԵՍԹ

# Արեւելյան գործընկերության խորհրդարանական բաղկացուցիչը Երեւան է բերել ադրբեջանցի պատգամավորների

**Ադրբեջանի խորհրդարանի մի քանի ներկայացուցիչներ Մոլդովայի, Վրաստանի, Ուկրաինայի եւ Հայաստանի իրենց գործընկերների հետ Երեւանում են՝ մասնակցելու Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի սոցիալական, կրթության, մշակույթի եւ քաղաքացիական հասարակության հարցերով հանձնաժողովի նիստին: Սոցիալական ցանցերում այնպիսի քննարկումներ ու մեկնաբանություններ շարքեր են ներկայացվել այս առնչությամբ, կարծես որեւէ արտառոց բան կա ադրբեջանցիների՝ Երեւանում գտնվելու մեջ, մինչդեռ վաղուց արտառոցություն է որեւէ հայաստանցու Բաքվում տեսնելու անգամ ենթադրությունը:**

**Այցելու խումբը երեկ եղել է Ծիծեռնակաբերդում, անշուշտ առանց ադրբեջանցիների, եւ հարգանք է մատուցել Եղեռնի զոհերի հիշատակին:**

**Ինչեւէ, 2011 թ. մայիսին որպես Արեւելյան գործընկերության խորհրդարանական բաղկացուցիչ հիմնադրված Եվրանեսթի ԽՎ սոցիալական, կրթության, մշակույթի եւ քաղաքացիական հասարակության հարցերով հանձնաժողովի երեկ մեկնարկած նիստը Երեւանում, ըստ ԱԺ հաղորդագրության, առաջինն է Եվրոպական խորհրդարանից դուրս: «Սա կարեւոր ձեռքբերում է, Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովում հայկական պատվիրակության թիմային աշխատանքի եւ Եվրոպական խորհրդարանի ու Արեւելյան գործընկեր երկրների խորհրդարանների, ինչպես նաեւ Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի հետ համագործակցության արդյունքը», ասվում է հաղորդագրության մեջ:**

**Երկօրյա աշխատանքների ընթացքում, ի շարս այլ հարցերի, նախատեսված է քննարկել երկու զեկույց «Քաղաքացիական հասարակության հզորացման» եւ «Աղքատության ու հասարակական օտարման դեմ պայքարի» թեմաներով:**

**Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովը հիմնադրվել է 2011 թ. մայիսին որպես Արեւելյան գործընկերության խորհրդարանական բաղկացուցիչ: Դրա հիմնական նպատակն է հզորացնել կապերը Եվրոպական միության եւ Արեւելյան Եվրոպայի հարեւանների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի միջեւ կապերը, որոնք այժմ ներկայացված են խորհրդարանական վեհաժողովում:**

**Երեկ հանձնաժողովի նիստի մասնակից պատգամավորների պատվիրակությանն ընդունել է նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Սարգսյանն ընդգծել է, որ Հայաստանն ի սկզբանե ողջունել է ԵՄ երկրների եւ ԵՄ արեւելյան հարեւանների համագործակցության խորհրդարանական պլատֆորմի՝ Եվրանեսթի հիմնումը եւ համարում է, որ այն կարող է դառնալ Արեւելյան գործընկերության առաջխաղացմանն ու տարածաշրջանային համագործակցության զարգացմանն օժանդակող հարթակ:**

**Հանդիպմանը նախագահ Սերժ Սարգսյանը պատասխանել է նաեւ հանձնաժողովի պատգամավորների հարցերին, այդ թվում՝ ԼՂ հակամարտության կարգավորման հարցում Հայաստանի դիրքորոշմանն ու բանակցային գործընթացի վերջին զարգացումներին:**

**Նիստը շարունակվելու է նաեւ այսօր, իսկ հաջորդ նմանօրինակ հանդիպում, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա արդեն Բաքվում, ապրիլին:** Ա. Հ.

# Անանուն դժգոհություն հարկային ծառայությունից

**«Հարձակում փոքր եւ միջին բիզնեսի վրա» վերնագրով «Ազգի» խմբագրությունը երեկ անանուն նամակ է ստացել, որի հեղինակները նշել են, որ իրենց նշած հետադարձ հասցեն մտացածին է, եւ չեն հայտնում իրենց կազմակերպությունների անունները «իշխանությունների հաշվեհարդարից խուսափելու նկատառումներով»:**

**Նամակում «Հարգելի հայրենակիցներ»-ին կոչ է արվում «փրկել փոքր եւ միջին բիզնեսի մնացորդները իսպառ ոչնչացումից», քանի որ «այս տարվա սկզբից աննախադեպ հարձակում է սկսվել փոքր եւ միջին բիզնեսի մնացորդների վրա»: Ըստ նամակի հեղինակների՝ բազմաթիվ փոքր կազմակերպություններ ծանուցագիր են ստանում հարկային տեսչությունից, որ ձեռք բերված տվյալներ համաձայն (հիմնականում փոխկապակցվածության տարբեր դրույթների պատճառաբանությամբ) իրենց կազմակերպությունը ճանաչվել է ավելացված արժեքի հարկ վճարող՝ նախորդ տարիների համար: Նշվում է, որ այդ կազմակերպություններից պահանջվում է վճարել ԱԱՀ-ի գումարները նախորդ երեք տարիների համար՝ ուշացման տույժերի հետ, որոնք հասնում են մի քանի տասնյակ միլիոն դրամների՝ յուրաքանչյուր փոքր կազմակերպության համար, եւ որոնց «տակից փոքր ձեռնարկությունները դուրս գալ չեն կարող»:**

**Թե ի՞նչ կարող է նշանակել այս նամակը եւ ո՞րն է խնդրի էությունը, մեկնաբանություններ ստանալու համար դիմեցինք Պետական եկամուտների կոմիտե եւ սպասում ենք պատասխանի:**

**Մեր կողմից նշենք, որ սեփական շահերը պաշտպանելու պայքարը նախ եւ առաջ այդ շահերն ունեցողների գործն է, իսկ լրատվամիջոցները կարող են միայն պաշտպանել այդ պայքարը՝ եթե արդարացի է: Այս առումով անընդունելի է, երբ պաշտպանություն են ակնկալում անանուն մնալով անգամ այն լրատվամիջոցի համար, ումից ակնկալում են այդ պաշտպանությունը: Սա պահանջի արդար լինելու վերաբերյալ կասկածներ է առաջացնում:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱւԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Ես»՝ «Մենք» ենք, իսկ «Մենք»՝ բացարձակ մեծամասնություն ենք

Երեկ «Սոցիոմետր» կենտրոնի ղեկավար **Ահարոն Ադիբեկյանը** ասուլիսում կարծիք հայտնեց, թե «բողոքավորները ու «աբիժնիկները» Հայաստանից հեռացել են, իսկ մնացել են հարմարվողները ու փոփոխություններից վախեցողները»: Այս առիթով հայտնի սոցիոլոգն անգամ հիշատակեց չինական անեծքը. «Թող որ ապրես փոփոխությունների ժամանակահատվածում»... Սակայն արդյո՞ք փոփոխությունները, այն էլ հայաստանյան իրավիճակում, անեծք են, այլ ոչ օրհնանք, եւ ամենակարեւորը՝ մի՞թե այսօր Հայաստանում բողոքավորներ, արդարացի բողոքավորներ չեն մնացել, եթե այո, ապա՝ ափսոս, քանի որ կայունությունն ու մանավանդ առաջընթացն ամենեւին էլ բողոքավորների բացակայություն չէ, այլեւ վերջիններիս ձայնը երբեմն լսելու ցանկությունն ու ունակությունը:

Այնպես է ստացվել, որ Հայաստանում ոչ միայն բողոքավորներ կան ու շատ կան, այլեւ նրանք մտավորականներից են նաեւ: Երեկ Դեմոկրատական կուսակցության գրասենյակում մի խումբ մտավորականներ հավաքվել էին. նրանք դիմում հղեցին ՀՀ քաղաքացիներին հետեւյալ բովանդակությամբ. «Մենք նորից հանրապետական ընտրությունների շեմին ենք եւ կրկին տագնապով են լցվում մեր հոգիները: Արդյոք կարո՞ղ ենք անկախության քսան տարի անց գոնե մեկ անգամ ազատ ընտրություն կատարել եւ ձեւավորել ժողովրդի վստահությունը վայելող իշխանություն: Ընդունելով Հայաստանի դեմոկրատական կուսակցության (ՀԴԿ) առաջարկը՝ մենք՝ ներքոստորագրյալներս, որոշեցինք միասնաբար դիմել ձեզ, հարգելի հայրենակիցներ: Մեր համոզմամբ՝ առաջիկա ընտրությունները շրջադարձային են լինելու ժողովրդի, պետության համար: Կամ մենք փորձելու ենք նախադրյալներ ստեղծել նոր, արդար կյանքով ապրելու, կամ... Անկախության տարիներին մեր պետականության արատը ժողովրդի եւ իշխանության միջեւ գոյացած վիհն է, աղետալի սոցիալական բեւեռացումը, որի պատճառը ժողովրդից կողոպտված հասարակության մի մասի հարստության ոչ լեգիտիմ լինելն է: Ժողովրդին, ըստ էության, չգոհացրին իշխանությունների քաղաքականության արդյունքները: Հասարակական կյանքում աղավաղվել են բարոյական չափանիշները: Դիմախեղվել է մեր ազգային նկարագիրը, խաթարվել են հոգեւոր արժեքները: Կոռուպցիայի եւ կաշառակերության դեմ պայքարը մինչ օրս իմիտացիոն բնույթ է կրում: Փաստացի, երկրում բացակայում է հասարակության վերահսկողությունը իշխանության թեւերի նկատմամբ: Չի դադարում երկիրն արյունաքրկող արտագաղթը: Պահն է, որ մենք՝ ՀՀ քաղաքացիներս, մեզ վայել արժանապատվությամբ թոթափենք վախի զգացումը, չենթարկվենք ճնշումներին ու ընտրակաշառքին, սուտ խոստումների գայթակղություններին, թույլ չտանք, որ մեզ փորձեն, որ մեր ձայնը այս կամ այն կերպ վաճառվի: Դուք պետք է հավատաք ձեր ուժերին: Հանուն իրական բարեփոխումների, հանուն ձեր ու ձեր երեխաների ապագայի, ընտրություն կատարեք ձեր խղճի մտոք, գաղափարների եւ ծրագրերի, դրանք կրողների միջեւ, որոնք ձեր համոզմամբ ի զորու են ու պատրաստակամ արմատապես փոխելու իրավիճակը, ներկայացնելու ռազմավարական այն ծրագիրը, որի կենսագործմամբ Հայաստանը ձեւավորվող աշխարհաքաղաքական նոր համակարգում կգտնի իր արժանի տեղը:

Ձեզանից վանենք ներշնչվող այն մտայնությունը, թե միեւնույն է, ձեր ձայնից ոչինչ կախված չէ, որ իբր «վերեւներում» ամեն ինչ կանխորոշվել է եւ ոչինչ փոխել հնարավոր չէ: Հավատացեք, դա ձեզ հուսալքելու փորձված միջոց է: Արդարության հաստատումը կախված է մեր հավաքական կամքից, «Ես»-ից դեպի «Մենք» գնալու մեծամասնությունից: Այլեւս հապաղել չի կարելի: Մեր երկիրը պետք է լինի առաջատարների շարքում: Ընտրենք, որ չպարտվենք: «Ես»՝ «Մենք»-ենք: Իսկ «Մենք»՝ բացարձակ մեծամասնություն ենք»:

Դիմումը ստորագրել են տարբեր ոլորտները ներկայացնող 33 մտավորական ու մշակութային գործիչներ:

Փաստորեն Հայաստանում մնացել են նաեւ փոփոխությունների կողմնակիցները, լավ է... անկախ նրանից, թե ո՞վ է իշխանության, լավ է:

Հ. Ա.

# 14 անվճար ծառայություններ Զարգացման հայկական բանկից

*Առաջիկայում բանկը կառաջարկի նաեւ հիպոթեկային վարկ՝ առանց կանխավճարի*



Զարգացման հայկական բանկի (ԶՀԳ) վարչության նախագահ **Կարեն Սարգսյանը** երեկ «Նովոստի» մամուլի ակումբում ներկայացրեց իր ղեկավարած բանկի գործունեության արդյունքները եւ առաջարկվող նոր ծառայությունները: Մասնավորապես, նա տեղեկացրեց, որ 2011-ից բանկը հանդես է գալիս նոր դիրքավորմամբ, որդեգրելով աճող ռազմավարություն: Արդյունքում, անցյալ տարվա ընթացքում Զարգացման հայկական բանկն արձանագրեց աճի բարձր ցուցանիշներ: Մասնավորապես, բանկի ակտիվներն աճեցին 60 տոկոսով, վարկային պորտֆելը գրեթե նույնքան՝ 15 մլրդ դրամից հասնելով 24 մլրդ դրամի: Այս տարի նախատեսվում է այդ ցուցանիշը հասցնել 32 մլրդ դրամի: Վարկերի մեծ մասը՝ 74 տոկոսն ուղղվել է փոքր եւ միջին բիզնեսին:

Բանկի ավանդներն անցյալ տարի աճել են կրկնակի՝ հասնելով մոտ 22 մլրդ դրամի, ավանդատուների քանակը՝ 2,3 անգամ, քարտապանների թիվն ավելացել է 44 տոկոսով, հասնելով 7 հազարի: Բանկի շահույթը կազմել է 770 մլն դրամ:

2012-ին բանկը շարունակելու է աճող ռազմավարությունը՝ 4 ուղղություններով ներկայացնելով նոր առաջարկներ եւ ծառայություններ: Առաջինն, ըստ Կարեն Սարգսյանի, բանկն առաջարկելու է նոր ավանդատեսակ, որն ունի աննախադեպ բարձր՝ 14 տոկոս դրամային ավանդի, 10 տոկոս դոլարով ավանդի եւ 8 տոկոս եվրոյով ավանդի դեպքում: Այդ տոկոսներով ավանդներն ընդունվելու են մինչեւ մայիսի 31-ը: Ըստ բանկի վարչության նախագահի, սա բարձր տոկոս չէ, եթե հաշվի առնենք, որ պետական արժեթղթերի տոկոսադրույքները 14-15 տոկոս են:

Երկրորդ ուղղությունը առավելապես փոքր ու միջին բիզնեսի համար հարմարավետ պայմաններով վարկերի տրամադրումն է՝ ցածր տոկոսադրույքով մինչեւ 7 տարի մարման ժամկետով եւ 21 ամիս մարման արտոնյալ ժամանակահատվածով:

Երրորդ ուղղությունը բանկի կողմից առաջարկվող 14 անվճար ծառայություններն են, որը նույնպես հիմնականում փոքր ու միջին ձեռնարկությունների համար է: Կարեն Սարգսյանը թվարկեց դրանցից առավել հետաքրքրականները՝ բանկային հաշվի բացում, դրամական փոխանցումներ, գումարի կանխիկացում, պլաստիկ քարտերի սպասարկում եւ այլն, որոնց դեպքում բանկը վճարներ չի վերցնի:

Չորրորդ ուղղությունը բանկի տարածքային զարգացումն է լինելու՝ նոր մասնաճյուղերի բացումը Երեւանում եւ մարզերում: Անցյալ տարի Զարգացման հայկական բանկի մասնաճյուղերն արդեն ավելացել են երեքով՝ այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բացված մասնաճյուղով:

Կարեն Սարգսյանը նաեւ տեղեկացրեց, որ Հայաստանում գործող բանկերից միայն 3-ն են բաց բաժնետիրական ընկերություններ, որոնց թվում նաեւ Զարգացման հայկական բանկը: Նա հայտնեց, որ բանկի բաժնետոմսերը վաճառվում են ֆոնդային բորսայում:

Մամուլի ասուլիսի վերջում Զարգացման հայկական բանկի վարչության նախագահը հայտարարեց մեկ այլ հետաքրքրական առաջարկի մասին, որը կներկայացվի առաջիկայում: Խոսքն առանց կանխավճարի հիպոթեկային վարկի մասին է, որի ժամկետը կլինի 10 տարով, ինչը նորություն է մեր շուկայում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԵՐ

# Հայաստանի եւ Ֆրոնտեքսի միջեւ համագործակցության մեկնարկը տրված է



ARMENPRESS

ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** եւ Եվրոմիության արտաքին սահմաններում գործառնական համագործակցության կառավարման գործակալության (Ֆրոնտեքս) ղեկավար **Իլկա Լայտինենը** ստորագրել են աշխատանքային համաձայնագիր, որով նախանշվում է Հայաստանի եւ Ֆրոնտեքսի միջեւ հետագա համագործակցության օրակարգը:

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի խոսքով՝ Ֆրոնտեքսի՝ Եվրոմիության արտաքին սահմանների կառավարման գործում կարեւորագույն դերակատարությունն ունեցող մարմնի հետ համագործակցությունը նշանակում է Հայաստանում միջազգային լավագույն փորձի ներդրում, Եվրոմիության դեղին գրքի պահանջներին համապատասխան ժամանակակից սահմանային ենթակառուցվածքների գործունեություն, պետական սահմանի կառավարման ոլորտում ներգրավված պետական մարմինների վարչական կարողությունների հզորացում, տեխնիկական վերազինում, ինչպես նաեւ համատեղ վերլուծություններ եւ փորձի փոխանակում: «Համաձայնագիրը հնարավորություն կտա խորացնել համագործակցությունը Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ եւ սերտորեն գործակցել մի շարք ուղղություններով՝ կազմակերպել համատեղ օպերացիաներ, առավել արդյունավետ պայքարել սահմանային հանցավորության դեմ, հզորացնել պետական սահմանի գործառույթներին առնչվող պետական մարմինների վարչական կարողությունները եւ նաեւ շատ լավ մեխանիզմներ ստեղծել խորացնելու երկկողմ համագործակցությունը ԵՄ անդամ երկրների եւ ՀՀ պետական սահմանին առնչվող պետական կառավարման մարմինների միջեւ», ասել է Արթուր Բաղդասարյանը:

Կարեւորելով ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի ներդրումն այս ուղղությամբ՝ գործակալության ղեկավար Իլկա Լայտինենը առանձնացրել է երեք գործոններ, որոնք հիմք հանդիսացան համագործակցության արագ մեկնարկի, սահուն եւ արդյունավետ ընթացքի եւ համաձայնագրի ստորագրման համար, այն է՝ Հայաստանի ղեկավարության քաղաքական մեծ պատրաստակամությունը, Հայաստանում սահմանների համալիր կառավարման հաջողված ռազմավարությունը եւ միջազգային կառույցների, այդ թվում ՄԱԿ-ի եւ ԵՄ-ի հաստատությունների աջակցությունը: Իլկա Լայտինենը հավելել է, որ համաձայնագրի ստորագրմանը անմիջապես հետեւելու է դրանից բխող գործողությունների ծրագրի մշակումը, որում ներառվելու են բոլոր համապատասխան գործողությունները եւ միջոցառումները:

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը նաեւ տեղեկացրել է, որ քննարկվել է առաջիկայում Հայաստանում կադրերի վերապատրաստման տարածաշրջանային ենթակառուցվածք ստեղծելու խնդիրը, որը մշտապես բարձր որակավորում կապահովի պետական սահմանին առնչվող բոլոր պետական կառավարման մարմինների համար:

# «Ընտրությունների ելքը կորոշվի ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությամբ»

«Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի ղեկավարն այս տարվա հունվարին Հայաստանի բոլոր մարզերում անցկացրել է հարցում՝ 1650 չափահասների շրջանում: Հարցման համաձայն, եթե խորհրդարանական առաջիկա ընտրություններին մասնակցեն միայն այս պահին կողմնորոշված քաղաքացիները, ապա նրանցից 39 տոկոսն իր ձայնը կտա ՀՀԿ-ին, 36 տոկոսը՝ ԲՀԿ-ին, 8,5 տոկոսը՝ ՀԱԿ-ին, 6,1 տոկոսը՝ ՀՅԴ-ին, ՕԵԿ-ին ձայն կտա 5,1 եւ «Ժառանգությանը» նույնպես՝ 5,1 տոկոսը:

Հարցման արդյունքները երեկ «Հենարան» ակումբում ներկայացրեց «Սոցիոմետր» կենտրոնի ղեկավար **Ահարոն Ադիբեկյանը**: Նրա կարծիքով՝ Հայաստանում հիմա մնացել են միայն «հարմարվածները», այսինքն՝ մարդիկ, որոնք հարմարվել են հայաստանյան կյանքին ու պայմաններին եւ վախենում են որեւէ փոփոխությունից: Իսկ բողոքավորները կամ «աբիժնիկները», ըստ սոցիոլոգի, լքել են Հայաստանը: Այսինքն՝ ընտրություններին գնալու են հարմարվածները:

Հարցումը նաեւ ցույց է տվել, որ քաղաքական անցուդարձին հետեւում է հարցվածների միայն 60 տոկոսը:

Սոցիոլոգիական կենտրոնի ուսումնասիրության համաձայն՝ պայքարը լինելու է ՀՀԿ-ի ու ԲՀԿ-ի միջեւ: «Եթե ԲՀԿ-ն կազմի մեծամասնություն, ինչը հնարավոր է, շատ բան կփոխվի, բայց եթե մնա երկրորդը, ապա ստիպված կլինի մտնել նոր կոալիցիայի մեջ: Գալիք ընտրությունների ելքը կորոշվի ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությամբ», ավելացրեց սոցիոլոգը:

Հարցման արդյունքները նաեւ ցույց են տվել՝ հարցվածների 40 տոկոսը վստահ է, որ կլինեն լուրջ խախտումներ, 36,6 տոկոսը վստահ է, որ կլինեն թեթեւ խախտումներ, իսկ 17 տոկոսի համոզմամբ լինելու են համեմատաբար արդար ընտրություններ:

Ի. Պ.

# Երազելով «Մեծ Ադրբեջանի» մասին

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Եթե մեր օրերի Թուրքիային թույլատրվում է երազել նոր Օսմանյան կայսրություն ստեղծելու մասին եւ նախագծելու այնպես, որ ընդգրկի նաեւ Կենտրոնական Ասիան, եւ եթե մեր օրերի Իսրայելին թույլատրվում է պահանջ ներկայացնել Էրեց Յիզրայելի («Իսրայելի մեծ երկիր», Հին կտակարանի գիրք Ծննդոց, գլուխ 15 եւ գիրք Ելից, գլուխ 23) վերաբերյալ, ապա ինչո՞ւ չթույլատրել նաեւ Ադրբեջանին՝ երազելու «Մեծն Ադրբեջանի» մասին, որը կներառի գրեթե ամբողջ կովկասյան տարածաշրջանը:

Թվում է, թե միայն հայերին է արգելված նման ծրագրեր կամ հույսեր փայփայելը: Թուրք արմատականներից մեկը վերջերս գրում էր, որ «Մեծ Հայաստանի երազը միշտ էլ երազ կմնա հայերի համար»:

Ադրբեջանը, որը երբեք էլ ինքնուրույն պետություն չի եղել 1918-ից առաջ, այժմ սկսել է հորինել մի պատմություն, արդարացնելու համար իր հողային պահանջները իր հարեւաններից:

Բոլորին հայտնի իր քերություններով հանդերձ, խորհրդային վարչակարգն, այնուամենայնիվ, իրեն ենթակա ազգություններին բռնի եղբայրություն էր պարտադրում՝ խուսափելու համար միջէթնիկական հավանական հակամարտություններից: Այժմ, երբ այդ վարչակարգը գոյություն չունի, այդ «եղբայրությունը» նույնպես հօդս է ցնդել՝ իր տեղը զիջելով մի շարք հակամարտությունների եւ արյունալի ընդհարումների:

Ղարաբաղյան պատերազմից ի վեր Ադրբեջանը մոլեգին պահանջներ է ներկայացնում Հայաստանին: Ազերի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը ծրագրում էր զավթել Հայաստանի ամբողջ տարածքը, որպեսզի լվանալ Սեւանի ջրերում եւ թեյ խմել նրա ափին: Նա նաեւ սպառնում էր «ազատագրել» իրանական կամ հյուսիսային Ադրբեջանը եւ միացնել ներկա Ադրբեջանի հանրապետությանը: Էլչիբեյին կովկասյան քաղաքականության մեջ համարում էին տարօրինակ, դոնքիշոտյան տիպի անձնավորություն:

Բայց ներկայումս, երբ ամպեր են կուտակվում Իրանի երկնակամարի վրա, ազերի առաջնորդները նոր հնարավորություններ են ձեռք բերում իրականացնելու իրենց այդ փառամոլական ձգտումները՝ ի հաշիվ մասնատված Իրանի եւ անշուշտ դրան որպես հետեւանք Հայաստանին բաժին ընկած դառը ճակատագրի:

Մինչեւ վերջերս նախագահ Իլհամ Ալիեւի ռազմատենչ ճառամաբանությունները Ղարաբաղի դեմ էին ուղղված ընդհանուր առմամբ, բայց օրերս բանակի զինվորների առաջ ելույթ ունենալով՝ նա նշեց, որ հայերը կովկասյան տարածաշրջանում գոյություն չեն ունեցել մինչեւ 18-րդ դար, իսկ դրանից հետո էլ ապրել են ազերի հողերի վրա:

Եվ այս արտասովոր հայտարարությունը նա կատարեց՝ մոռացության տալով Տիգրան Բ-ի կայսրությունը մ. թ. ա., եւ կամ Էջմիածնի հիմնադրումը 301 թվին:

Սակայն ազերիների ծրագրերը սոսկ հռետորական ճոռոմաբանություններ չեն: Դրանք հիմնվում են տարածաշրջանում տեղի ունեցող նոր զարգացումների վրա:

Մինչ «արաբական գարունը» մոտենում է Իրանին, ազերիները հույս են փայփայում, որ կարող են գործակից դառնալ արեւմտյան ծրագրերին եւ առաջին օգտվողը դրանից՝ Իրանի հնարավոր մասնատման դեպքում:

Նախկին պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն վերջերս հայտարարեց, որ «եթե մեր տարածքում թեկուզ մեկ ամերիկյան ռազմական բազա գոյություն ունենար, ապա մեր հարեւանները չէին համարձակվի մեզ հետ խոսել այդ տոնով, որ հիմա խոսում են»:

Ռազմական բազայի բացը Իսրայելն այժմ լրացնում է Ադրբեջան ուղարկելով զինվորական խորհրդատուներ եւ նրան վաճառելով զինամթերք, ներառյալ անօդաչու ինքնաթիռներ, որոնք ոչ միայն Ղարաբաղի դեմ կարող են ուղղորդվել, այլեւ Իրանի՝ տարածաշրջանում հակամարտության սրման դեպքում:

«Արաբական գարթոնքը» կամ վարչակարգերի փոփոխություններում Իսրայելին թշնամի երկրներում իրականացվում են ներքին «պայքարների» շնորհիվ, որոնց համար օգտագործվում են աղանդավորական գործոնները: Շիաներին, քրդերին եւ սուննիներին իրար դեմ հանեցին Իրաքը խորտակելու նպատակով: Լիբիայում ցեղային տարբերությունները նպաստեցին նման ծրագրի իրագործմանը, իսկ Սիրիայում այս օրերին Թուրքիան սուննի մեծամասնությանն է զինում, որպեսզի վերջինս պայքարի ալեւիների դեմ ու տապալի Բաշար ալ Ասադի վարչակարգը:

Քանի որ ծանոթ ենք այս ծրագրին, կարելի է անվարան հաստատել, որ իրանական Ադրբեջանի գործոնը օգտագործվելու է ապակայունացնելու համար իրավիճակը Իրանում, եւ ի վերջո հասնելու կառավարության տապալմանը: Այդ պատճառով էլ ախորժակները սրվում են: Բաքվի առաջնորդները պատրաստ են համագործակցել Արեւմուտքի հետ Իրանում վարչակարգի փոփոխման հարցում:

Վերջերս Մուստաֆա Ահմադի Ռոշանի անունով միջուկային ոլորտի մի գիտնական սպանվեց Իրանում: Իրանի կառավարությունը սկզբնական շրջանում Իսրայելին էր մեղադրում այդ ահաբեկչական գործողության համար, բայց այժմ պարզվում է, որ հանցագործը ադրբեջանցի է:

Դարձյալ վերջերս Մ. Նահանգների կառավարությունը հայտարարեց, որ Հայաստանին տրամադրվող կառավարական օգնությունը կազմելու է 35,843 մլն դոլար, ինչը 18 տոկոսով պակաս է անցյալ տարվա 43,430 մլն դոլարից: Հեգնականն այն է, որ զինվորական օգնության հավասարակշռությունը պահպանվում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, հակառակ որ ազատության խրախուսման օրենքի 907 հոդվածը արգելում է անմիջական օժանդակություն ցուցաբերել Ադրբեջանին:

Օգտագործելով իր դիրքը՝ նախագահ Ջորջ Բուշը առկախել էր այդ արգելքը, եւ Օբամայի ներկա վարչակարգը շարունակում է նույն քաղաքականությունը՝ անտեսելով նախագահ Ալիեւի ռազմատենչ հայտարարությունները, կամ էլ առ ի գնահատանք հակաիրանական արկածախնդրությանը մասնակցելու Բաքվի պատրաստակամությանը:

Իրանը մասնատելու փորձեր անցյալում էլ են եղել: Առաջինը՝ անցյալ դարի սկզբներին Թուրքիան էր նախաձեռնել: Երկրորդը 1944-45 թվերին էր, երբ խորհրդային զավթողական ուժերը հայտարարեցին «Ադրբեջանի ժողովրդավարական հանրապետության» ստեղծման մասին, իսկ երրորդը 1989-ին, երբ վերացվեց Ադրբեջանի եւ Իրանի միջեւ գոյություն ունեցող սահմանը:

Այս բոլոր նախադրյալները հույս են ներշնչում Բաքվի առաջնորդներին, որ Իրանի անկումից իրենք առաջին օգտվողներից կլինեն:

Կառավարական եւ ակադեմիական շրջանակները, ինչպես նաեւ լրատվամիջոցները իրենց ուշադրությունը բեւեռել են Իրանի եւ Ռուսաստանի միջեւ 1828-ի փետրվարի 21-ին ստորագրված Թուրքմենչայի հաշտության պայմանագրի վրա, որով իբր մասնատվեց «պատմական Ադրբեջանը»: Այժմ, ժամանակն է, ըստ Բաքվի առաջնորդների, վերականգնելու մի նոր պայմանագրով Ադրբեջանի գերիշխանությունը այսպես կոչված «Հյուսիսային Ադրբեջանի» տարածքում եւ միացնել այդ «իրանական Ադրբեջանը» ներկայիս Ադրբեջանի հանրապետությանը, այդ ընթացքում միաժամանակ նաեւ «լուծելու» ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի, Հարավային Դաղստանի, Ախալքալաքի եւ Ախալցխայի հարցերը:

Նման մի ծրագիր անշուշտ ոչ միայն Հայաստանին, այլեւ Ռուսաստանին եւ Վրաստանին պետք է մտահոգի: Հայերը Թուրքմենչայի պայմանագիրը համարում են պատմական կարեւոր իրադարձություն, որը ազատագրեց Հայաստանը մահմեդական խաների դարավոր լծից եւ միացրեց ենթադրաբար առավել հանդուրժողական քրիստոնյա Ռուսաստանին: Արեւելահայ գրականության ռահվիրա Խաչատուր Աբովյանն այս իրադարձությունը ողջունել է իր «Վերք Հայաստանի» վեպում գրելով. «Օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ»:

Իրականում հայերը շատ բան ունեն նշելու այդ պայմանագրի վերաբերյալ, որն ստորագրվեց Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ 1826-28 թթ. պատերազմի ավարտին: Դրանից առաջ՝ 1813-ին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով Պարսկաստանից Ռուսաստանին էին անցել որոշ տարածքներ, որոնք ավելի ուշ կռվախնձոր էին դարձել: Թուրքմենչայի պայմանագրով հակամարտությունն իր վերջնական լուծումն էրստանում: Իրանը Ռուսաստանին էր զիջում Երեւանի, Նախիջեւանի, Թալիշի խանությունները, ինչպես նաեւ Օրդուբադի, Մուղանի եւ այլ տարածքները:

Կարեւորը հայերիս համար այն էր, որ Պարսկաստանից մեծ թվով հայեր ներգաղթեցին Անդրկովկաս:

Այժմ Թուրքմենչայի պայմանագիրը հողային պահանջներ ներկայացնելու գործիք է դարձել Բաքվի առաջնորդների ձեռքերում: Այդ նպատակով էլ նրանք կամավոր գործընկերներ են դարձել Արեւմուտքին եւ մեղսակիցներ՝ Իրանին մասնատելու նրա ծրագրած դավադրությանը, բաց գիտակցելով, որ դրանով վնաս կպատճառեն նաեւ Հայաստանին:

Ահա թե ինչու Արեւմուտքը հանդուրժում է Ալիեւի անսանձ ռազմատենչ հայտարարությունները եւ անտեսում ազատության խրախուսման օրոշման դրույթները:

Եթե ժամանակին Էլչիբեյի պահանջատիրական հայտարարությունները լոկ ծիծաղ էին առաջացնում, ապա այժմյան Ադրբեջանի առաջնորդը գործին ավելի լուրջ է մոտենում: Քաղաքականության ներհատուկ օրենքներից մեկն այն է, որ փոքր պետությունները իրենց շահերը պարտավոր են համապատասխանեցնել մեծ պետությունների շահերին: Եվ Բաքուն այսօր հետապնդում է հենց այդ քաղաքականությունը:

*Դետրոյթ, ԱՄՆ*
*Թարգմ. Հ. Ծ.*

# Նիւ Եորքի մէջ Էրիք Պողոսեան կը խօսի Սողոմոն Թեհլիրեանի մասին ծրագրած իր գրքին շուրջ

**Էրիք Պողոսեան, գլխաւոր դերասաններէն «Կարգ ու կանոն» («Law & Order») ամերիկյան հեռուստասեփիլի շարքին եւ այլեւս դասական համարուած «Talk Radio» մենակատարութեան մէջ, փետրուար 2-ին «Գորնել» ակումբին մէջ ներկայացաւ Նիւ Եորքի հայ հանրութեան խօսելու համար իր դերասանական ասպարէզին, իր հայկական ինքնութեան եւ Թալէաթ փաշայի ահաբեկիչ, ազգային հերոս Սողոմոն Թեհլիրեանի շուրջ իր հետազօտութեան մասին:**

**Երեկոն, կոչուած «Թեհլիրեանի որոնումը» («Searching for Tehlirian»), կազմակերպուած էր Համազգային հայ Կրթական եւ մշակութային միութեան Նիւ Եորքի մասնաճիւղին կողմէ, եւ եղաւ առաջին դասախօսութիւնը Համազգայինի «Արուեստ եւ գրականութիւն» ձեռնարկներու շարքին:**

**Համազգայինի Նիւ Եորքի մասնաճիւղի ատենապետ Աւետիս Համբեանի հակիրճ բացման խօսքէն ետք, Էրիք Պողոսեան, որ ներկայիս ամենէն հռչակաւոր ամերիկահայ դերասանն է շնորհիւ իր բեմական եւ գրական վաստակին, իր զրուցատրութիւնը սկսաւ ակնարկով մը, որ կը վերաբերէր Ուոթըրթաունի մէջ անցուցած իր մանկութեան:**

**- Մեծ հայրս կ'ըսէր, որ ամբողջ աշխարհը հայ է, որովհետեւ բոլորս Նոյէն սերած ենք, ըսաւ հռչակաւոր դերակատարը, շարժելով ներկաներուն խնդուքը:**

**Պողոսեան կոչ ըրաւ նոր աչքով դիտելու իր նման հայերը, որոնք կազմաւորուած եւ մեծցած են հայ համայնքային կեանքէն հեռու, եւ որոնք իրենց հայկական ինքնութիւնը կը պահպանեն իւրայատուկ կերպով, նման այն անհատներուն, որոնք աւելի գործօն մասնակցութիւն կը բերեն գաղութային աշխատանքներուն:**

**Երբ սկսած է դերասանական հռչակ շահիլ, Պողոսեան ճնշումներու ենթարկուած է իր ազգանունը փոխելու եւ կրելու աւելի մատչելի անուն մը ամերիկեան հանրութեան համար:**

**- Միայն ահաբեկիչի դերեր պիտի տան այդ անունովդ, ըսած են իրեն:**

**Ինք սակայն չէ հրաժարած իր հայկական մականունէն:**

**Իսկ ամերիկահայեր յաճախ իրեն կու տային զանազան հարցումներ, ինչպէս.**

**- Ե՞րբ բան մը պիտի ընես Ցեղասպանութեան մասին:**

**- Ե՞րբ թատերգութիւն պիտի գրես հայկական նիւթով:**



**Այսուամենայնիւ, երբեք մղուած չէր այդ նիւթերուն անդրադառնալու թատերգական բնոյթ տալով:**

**Իննսունականներու Պալքանեան պատերազմներու ժամանակ Պողոսեան յանկարծ նկատեց այդ աղէտին կապը իր սեփական պատմութեան հետ:**

**- Երբ տեսայ ի՞նչ կը պատահէր Սերբիայի մէջ, անդրադարձայ որ ա՞յս էր ինչ որ պատահած էր ընտանիքիս, ըսաւ:**

**Ուրեմն այդ շրջանին է որ սկսած է խորասուզուիլ Եղեռնի պատմութեան մէջ եւ յատկապէս կեդրոնացած՝ Սողոմոն Թեհլիրեանի պարագային վրայ:**

**Պողոսեանի սկզբնական նպատակը գրականացնել էր Թեհլիրեանի կողմէ Թալէաթի սպանութիւնը Բեռլինի մէջ, մարտ 15, 1921-ին: Որքան նիւթին մէջ խորացաւ, հայոց պատմութեան եւ հայկական նիւթերու վերաբերեալ 1000 գիրքէ աւելի հաւաքածոյ մը կազմելով, Պողոսեան նոր երեսներ գտաւ Ցեղասպանութեան ծրագրին շուրջ եւ Եղեռնը կազմակերպողներու ջարդարարութեան վերաբերեալ, որոնց մասին ընդհանրապէս սակաւաթիւ գրութիւններ կային կամ բոլորովին չկոյ էին:**

**Իր խօսքին մէջ Պողոսեան ներկայացուց հայոց արհաւիրքի աշխարհագրա-քաղաքական պայմանները, նշելով Գերմանիոյ եւ Մեծ Բրիտանիոյ մրցակցութիւնը՝ Կասպից ծովու եւ Միջին Արեւելքի քարիւղին տիրանալու համար, ինչպէս նաեւ Գալուստ Կիւլպենկեանի դերակատարութիւնը այս վերջին պայքարին մէջ:**

**Այս եւ ուրիշ նիւթեր Պողոսեանը մղեցին վաւերագրական գիրք մը գրելու, որ հաւանաբար լոյս տեսնէ այս տարուան վերջաւորութեան կամ 2013-ի սկիզբը, մինչ կը շարունակէ իր հետազօտական ճամբորդութիւնները եւ ուսումնասիրութիւնները, ներառեալ հանդիպում մը Սիլվա Նաթալի Մանուկեանին հետ եւ իր անյաջող փորձերը փաստաթուղթեր գտնելու տիկ. Նաթալի Մանուկեանի հօրմէն՝ բանաստեղծ Շահան Նաթալի, հեղինակը «Նեմեսիս» գործողութեան, ահաբեկելու համար Եղեռնի կազմակերպիչները՝ Ջեմալ փաշա, Սայիդ Հալիմ, Թալէաթ եւ ուրիշներ:**

**Իր զրոյցի աւարտին Պողոսեան ունկնդիրներու հարցումներուն պատասխանեց աշխոյժ մթնոլորտի մը մէջ, որ շարունակուեցաւ հանդիպումէն յետոյ, խօսելով ներկաներու հետ, որոնք կը մօտենային զինք շնորհաւորելու, ընտանեկան պատմութիւններ բաժնելու կամ յաւելեալ հարցումներ ընելու:**

**- Շատ լաւատեղեակ է հայկական նիւթերու շուրջ, զարմացած եմ, ըսաւ ներկայ մը, արտայայտելով ընդհանուր տպաւորութիւնը բոլոր ներկաներուն, որոնք բարի զարմանք կը յայտնէին, որ Հոլիվուդի ամենէն համբաւաւոր հայ դերասանը այդքան ծանօթ է հայոց պատմութեան:**

ԹՂԹԱԿԻՑ
Նյու Յորք

# Թուրքիայի ազգային մեծ ժողովը հաղորդագրությամբ դատապարտել է Խոջալուի «կոտորածը»

## *Անտեսելով սեփական պատմության առերեսվելու միջազգային պահանջները*

Երեկ Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հաղորդագրությամբ դատապարտել է Խոջալուի այսպես կոչված կոտորածը: Մինչ այդ Ստամբուլում Թաքսիմի սրահում բացվել էր մտացածին այս կոտորածներն արտացոլող լուսանկարների ցուցահանդեսը, որը փետրվարի 17-19 կազմակերպել է Իսլամական կոնֆերանս կազմակերպության երիտասարդական ֆորումը:

Ինչու մտացածին, որովհետեւ Խոջալուում ոչ թե կոտորած տեղի ունեցավ, այլ՝ ի դեմս ադրբեջանական ՕՄՕՆ-ի, ոչնչացվեց ադրբեջանցի մարդասպան հրոսակի հենակետը: Պարզապես Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում անպաշտպան կանանց, երեխաներին սպանելու սովոր ադրբեջանցի հրոսակը խուճապի էր մատնվել հայ ազատամարտիկի առջեւ, հետեւաբար առանձնակի դժվարություն չներկայացրեց չարագործությունների համար հրոսակին պատժելը:

Թուրքիայի ազգային մեծ ժողովը կամ Մեջլիսի հանձնաժողովը ինչ կոտորած էլ հորինի, ինչպիսի հաղորդագրություն էլ տարածի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն անդառնալի է: Ի դեպ, Լեռնային Ղարաբաղում հայ ազատամարտիկը ադրբեջանցի հրոսակից բացի, պատժել էր նաեւ «հայերի դեմ կռիվներում ազերի եղբայրներին օգնելու» համար «գորշ գայլերի» առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի նախաձեռնությամբ հավաքագրված եւ Ադրբեջան գործուղված «զգոն» թուրքերին:

1994-ի հրադադարից հետո հավանաբար «զգոն» թուրքերը վերադարձան գործուղումից, սակայն սրանց մի մասը միայն, իսկ մյուսը՝ Լեռնային Ղարաբաղում կնքեց իր անփառունակ մահկանացուն: Հասկանալի է, որ նահատակի կոչմանը չարժանացավ, ոչ էլ Թուրքիան հիշեց իր «զգոն» զավակներին, նույնիսկ Թյուրքեշը չհիշատակեց սրանց անունը:

Թվում էր, թե 1992-ին Խոջալուում չեզոքացված ադրբեջանցի մարդասպան հրոսակների համար հատուկ հաղորդագրություն տարածող Թուրքիայի ազգային մեծ ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը պետք է հիշի նաեւ թվականը մինչեւ 1992-ը, երեք հազարի հասնող այն «զգոն» թուրքերի մասին, որոնք դառնալով ոչ եւս, արժանացան Ղարաբաղում ոչնչացված իրենց ազերի եղբայրների ճակատագրին: Բայց ապարդյուն:

Մեջլիսի հանձնաժողովը, շրջանցելով «զգոն» թուրքերին, նախընտրում է դատապարտել Խոջալուում ադրբեջանցի մարդասպան հրոսակի չեզոքացումը, մասնավորապես ասելով. «Խոջալուն պատմության մեջ այն սեւ էջն է, որը Հայաստանն է բացել: 1992-ի փետրվարի 25-26-ին Ադրբեջանի Ղարաբաղ մարզի Խոջալու ավանում հայերի իրականացրած կոտորածի հետեւանքով, որը ծրագրված էր, խոշտանգման ենթարկվելով սպանվել են 613 ազերի թուրքեր, որոնցից 106-ը կին, 63-ը՝ երեխա, 70-ը՝ ծեր, 1275 մարդու պատանդ են վերցրել, իսկ 150-ն անհետ կորել է:

Այն, ինչ տեղի է ունեցել Խոջալուում, պատմության մեծ ամոթն է, իսկ միջազգային իրավունքի առումով՝ մարդկության դեմ կատարված հանցագործություն: Ադրբեջանի թուրքերի հանդեպ իրագործված այս կոտորածի վիշտն իբրեւ թուրք ազգի ներկայացուցիչներ, զգում ենք մեր սրտի խորքում եւ կոտորածը դատապարտում ենք:

Թուրքիան մարդկային արժեքները ոտնահարող այս գործողության բացահայտմանն ու մեղավորների պատժման համար մղած արդարացի պայքարում շարունակելու է աջակցել Ադրբեջանին»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Քաբուլը բանակցության հրավիրեց «Թալիբանին»

Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը «Թալիբան» շարժմանը պաշտոնապես հրավիրել է կառավարության հետ անմիջական բանակցությունների: Կարզայի հայտարարությունը զետեղված է նախագահական կայքէջում:

Նախագահը ընդգծել է տարածաշրջանային բանակցություններում Պակիստանի կարեւոր դերը եւ Աֆղանստանի կառավարությանը խնդրել է նպաստել Քաբուլի եւ թալիբների ուղղակի բանակցություններին:

Կարզայը իր հայտարարությունն արել է Պակիստան կատարած այցելությունից հետո, որի ընթացքում նա հանդիպել էր այդ երկրի քաղաքական եւ կրոնական առաջնորդների հետ: Հայտարարությունն անելուց առաջ Կարզայը իր ուղեւորության արդյունքները քննարկել էր ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Հունվարի վերջերին արդեն հայտնի էր, որ Քաբուլը պատրաստ է առանձին բանակցել «Թալիբանի» հետ: Դրանից քիչ անց թալիբները մերժել էին նման բանակցության հնարավորությունը: Այդուհանդերձ փետրվարի կեսերին Կարզայը հայտարարել էր, որ «Թալիբանի» հետ կապ է հաստատել ինչպես պաշտոնական Քաբուլը, այնպես էլ ԱՄՆ կառավարությունը:

Ավելի վաղ թալիբները հայտարարել էին, թե պատրաստ են բանակցել միայն ԱՄՆ-ի կամ Քաբուլի մյուս դաշնակիցների մասնակցության դեպքում: Պակիստանը մտադրություն է հայտնում Աֆղանստանին աջակցելու լոկ այն դեպքում, եթե բանակցություններին չմասնակցի երրորդ կողմ:

# Ֆեմինիստների պահանջով «օրիորդ» բառը հանվեց պաշտոնական ֆրանսերենից

Ֆեմինիստների պահանջով Ֆրանսիայի կառավարությունը որոշել է «օրիորդ» (mademoiselle) բառը հանել պաշտոնական ֆրանսերենից, հաղորդում է Ֆրանսպրեսը:

Չամուսնացած կնոջը դիմելու այդ ավանդական ձեւը, որը համարժեք է անգլերեն «միսս»-ին կամ գերմաներեն «ֆրոյլայն»-ին, սեռային հավասարության շարժման ակտիվիստուհիները համարում են «նվաստացուցիչ եւ սեռախտրական»: Առաջարկվում է «մադմուազելի» փոխարեն օգտագործել «մադամ» (տիկին), ինչպես որ անխտիր բոլոր տղամարդկանց դիմում են «մսյո» (պարոն) բառով՝ անկախ ընտանեկան դրությունից:

Շրջանառությունից հանվում է եւս երկու բառակապակցություն: «Օրիորդական ազգանունը» փաստաթղթերում կփոխարինվի «ընտանեկան ազգանվամբ» (nom de famille): Իսկ «ամուսնության ազգանունը», որը, ինչպես նշված է որոշման մեջ, «սխալ է արտահայտում այրիների կամ ամուսնու ազգանունը պահպանող ամուսնալուծվածների վիճակը», կփոխարինվի «կիրառվող ազգանուն» (nom d'usage) բառակապակցությամբ:

Խնայողության նկատառումներով բոլոր փոփոխությունները կկատարվեն աստիճանաբար: Անցյալում տպագրված «նվաստացուցիչ» փաստաթղթերի բլանկները կարող են օգտագործվել մինչեւ դրանց սպառվելը:

Ֆրանսիայում «մադմուազել» դիմելաձեւը երբեմն համարվում է հաճոյախոսություն, քանզի ենթադրում է, որ կինը ջահել է եւ թերեւս ազատ: Սակայն Oser Fe'minisme խմբի ակտիվիստուհիները 2011-ի սեպտեմբերին արշավ ծավալեցին այդ բառի դեմ, հայտարարելով, թե դա վիրավորում է կանանց եւ ոտնահարում նրանց իրավունքները: Ֆեմինիստների կողմն անցավ Ֆրանսիայի համերաշխության եւ սոցիալական համախմբման նախարարուհի Ռոզլին Բաշլո-Նարկենը:



# Մահափորձ Աբխազիայի նախագահի դեմ

## *Սպանվել է երկու թիկնապահ*

Հարավային Օսիայում նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունները՝ թեկնածուների փոխատեղումներով ու նոր ընտրությունների անցկացման հեռանկարով, վերջին շրջանի քննարկումների հիմնական թեման են, հատկապես որ հնարավորություն է տալիս վրացական կողմին հնարավորինս շահարկելու հարավօսական իրողությունների բացասական դրսեւորումները: Մինչդեռ հետխորհրդային շրջանի որեւէ երկրում ընտրությունների ընթացքը զայսօր չի անցնում առանց միջադեպերի, ինչպես նաեւ դեռեւս նախընտրական շրջանում մեկնարկող հետընտրական մեղադրանքների:

Սակայն Վրաստանի համար հարավօսական հարցը ուզածի նման ներկայացնելու կողքին մեկ այլ հնարավորություն էլ երեկ Աբխազիայում են ընձեռել առայժմ անհայտ անձինք՝ մահափորձ կատարելով Աբխազիայի նախագահ Ալեքսանդր Անկվաբի դեմ: Վրացական լրատվամիջոցները ամենայն առատությամբ ու մանրամասներով ներկայացնում են միջադեպը, ընդ որում՝ առանց հղումների, թեեւ ակնհայտ է, որ Սուխումից վրացական լրատվամիջոցների համար աշխատող լրագրողների առկայությունը դեռեւս փաստվելու կարիք ունի (այս հարցում ինչպիսի նմանություն հայաստանյան լրագրողների հետ - Ա.Հ.): Թերեւս պետք է շնորհակալ լինել, որ ռուսաստանյան լրատվամիջոցների հղումներ, այդուհանդերձ, արվում են:

Ինչեւէ, ընդհանրական տեղեկությամբ, երեկ առավոտյան շուտ Աբխազիայի Գուդաուրիի շրջանում կրակել են Անկվաբին ուղեկցող շարասյան վրա, երկու թիկնապահներից մեկը մահացել է տեղում, իսկ մյուսը՝ ավելի ուշ հիվանդանոցում, եւս երկուսը ստացել են ծանր մարմնական վնասվածքներ՝ փակելով Անկվաբի ուղղությամբ գնդացրից արձակված գնդակների ճանապարհը: Աբխազիայի նախագահին ուղեկցող շարասյան ուղղությամբ, ըստ «Ինտերֆաքսի» տեղեկությունների, կրակել են նաեւ նռնականետից:

Որպես հիմնական դրդապատճառ են ներկայացվում Աբխազիայի նախագահի վերջին նախաձեռնությունները՝ պայքար ինչպես հանցավորության, այնպես էլ «օրենքով գողերի» դեմ:

Ա. Հ.

# ԱՄՆ. հանրապետական թեկնածուների փոխադարձ քննադատություններ



Ներկայումս ԱՄՆ-ում անցկացվող Հանրապետական կուսակցության նախնական ընտրություններում քաղաքական գովազդի կեսից ավելին ուղղված է հենց մրցավազքի մասնակիցների քննադատությանը: Այդ են վկայում «Վաշինգտոն փոստ» թերթի անցկացրած հետազոտության արդյունքները:

2008-ին հանրապետականների նախնական ընտրությունների ժամանակ թեկնածուների փոխադարձ քննադատությունները կազմել էին գովազդային նյութերի ընդամենը 6 տոկոսը:

Մասաչուսեթսի նախկին նահանգապետ Միթ Ռոմնին եւ նրան աջակցող խմբերը ընդդիմախոսներին քննադատող տեսահոլովակների վրա ծախսել են գովազդային բյուջեի միջոցների 2/3-ը: Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նախկին նախագահ Նյուտ Գինգրիչը եւ նրան աջակցող քաղաքական հանձնախումբը նույն նպատակով ծախսել են բյուջեի կեսը, կոնգրեսական Ռոն Պոլը եւ նրա կողմնակիցները՝ նվազ քան կեսը, Փենսիլվանիայի նախկին սենատոր Ռիկ Սանտորումը եւ նրա կողմնակիցները՝ 1/4-ը:

Փորձագետների գնահատումների համաձայն, նման իրավիճակը բացատրվում է ընտրարշավների ֆինանսավորման կանոնների փոփոխությամբ: 2010-ից թեկնածուներին աջակցող խմբերին, այսպես կոչված «գերհանձնախմբերին» թույլատրվում է անսահմանափակ նվիրատվություններ ստանալ: Պաշտոնապես այդ խմբերը կախված չեն բուն քաղաքական գործիչներից եւ կապված չեն նրանց հետ: Դա թեկնածուներին հնարավորություն է տալիս մերժել ընդդիմախոսներին վարկաբեկելու ձգտման հետ կապված կշտամբանքները: «Գերհանձնախմբերը» ընդդիմախոսների քննադատության վրա ծախսում են միջոցների 72 տոկոսը, մինչդեռ բուն քաղաքական գործիչների նախընտրական շտաբները նույն նպատակով ծախսում են 27 տոկոսը:

Ընդդիմախոսների քննադատության վերջին վառ օրինակը դարձավ Սանտորումի ընտրարշավի տեսահոլովակը: Այնտեղ Ռոմնիին հիշեցնող մի մարդ փորձում է ցեխ շպրտել Սանտորումի նկարի վրա, բայց ի վերջո ինքն է ցեխոտվում: Մեծ ուշադրության է արժանացել նաեւ Ռոն Պոլի ընտրարշավի տեսահոլովակը, որտեղ Գինգրիչին անվանում են «սերիական երեսպաշտ»:

«Վաշինգտոն փոստի» անցկացրած հետազոտության մեջ նախընտրական նյութը համարվում է ընդդիմախոսների քննադատություն, եթե այնտեղ հիշատակված է մեկ ուրիշ թեկնածու:

ՀԱՄԵՐԳԻՑ ԱՌԱՋ

## «Իմ ուժը այստեղից եմ քաղում»




Փետրվարի 24-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա համերգ՝ նվիրված կոմպոզիտոր Դավիթ Հալաջյանի 50-ամյակին: Համերգը կղեկավարի ՀՊՖՆ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Էդուարդ Թոփչյանը**, կհնչի Հալաջյանի «Missa de Lumine» 85 րոպե տեւողությամբ մեսսան: Ֆիլհարմոնիկի հետ համերգին հանդես կգա նաեւ Հայաստանի պետական կամերային երգչախումբը:

«Ուրախ եմ, որ փետրվարի 24-ին բախտ ունենք կատարելու մի ստեղծագործություն, որը անձամբ իմ կողմից շատ սիրելի է, դա մի մեսսա է, որ բազմաթիվ անգամ է կատարվել: Ինձ համար նաեւ ուրախալի է, որ մենք առիթ ունենք աշխատելու Ռոբերտ Մլքեյանի կամերային երգչախմբի հետ: Եվ իմ, եւ մաեստրո Ռ. Մլքեյանի նպատակն այն է, որ ներկայացնենք մեր ընկերոջ ստեղծագործությունը, միեւնույն ժամանակ ուրախ ու հպարտ լինելով, որ կատարում ենք այնպիսի հիանալի ստեղծագործություն, որի հեղինակը մեր ընկերն է», ասաց Էդուարդ Թոփչյանը:

«Խմբերգային արվեստում ինձ համար Դավիթ Հալաջյանը գտնվում է առաջատար դիրքում: Ես ընկերն եմ շատ մեծ կոմպոզիտորի, եւ կցանկանամ որ հայ ժողովուրդը, չվախենա ասել՝ շատ մեծ, հանճարեղ, տաղանդավոր: Ես չեմ վախենում, քանի որ նստած եմ հենց այդպիսի կոմպոզիտորի կողքին», ասաց Հայաստանի կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Ռոբերտ Մլքեյանը**:

Կոմպոզիտոր Դ. Հալաջյանին ուրախացնում է այն փաստը, որ Հայաստանում տեսնում է նաեւ երիտասարդ ունկնդիրների, ինչի մասին չի կարող ասել այլ երկրների պարագայում: Իր ստեղծագործությունների բարձրակետը նա համարում է մեսսան, լարային նվագախմբի համար գրված շարքը՝ որը Գերմանիայում առաջին անգամ կատարել է Է. Թոփչյանը: Բարձրակետերից կարեւորագույնը համարում է Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված ստեղծագործությունը, որը գրել էր երիտասարդ տարիքում եւ ինչ-ինչ պատճառներով չէր համարում իրեն արժանի, նույնիսկ ցանկանում էր ոչնչացնել, սակայն Ռոբերտ Մլքեյանը գտել ու վերցրել էր նոտաները ու կյանք տվել նրանց:

«Ուրախ եմ ներկայացնելու իմ ստեղծագործությունը լավագույն կատարողների միջոցով: Հուսով եմ եւս մի քանի համերգ կլինի այս տարի: Ինձ համար մեծ պատիվ է աշխատանքներս ներկայացնել հայրենիքում: Մի անգամ ընկերներիցս մեկը ինձ ծիրանի շիվ նվիրեց: Տնկեցի Ցյուրիխում՝ տանս կողքին: Ծառը մեծանում էր, սակայն պտուղ չէր տալիս: Սա հոմանիշ է մեզ համար», ասաց **Հալաջյանը**, հավելով՝ «Իմ ուժը այստեղից եմ քաղում»:

ԱՆՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

## Լիցք

### *Նունուֆար Մինասյանի ցուցահանդեսի առթիվ*

ԱԶԳ պատկերասրահի ցուցանակին նկարված հողմաղացի կողքին գրված էր Նունուֆար Մինասյան:

Օգոստոսյան այդ շոգ օրը ես գնացի այնտեղ՝ ճանաչելու նրան, լրացնելու նրա կերպարը, որը ինչ-որ ձեւով ծանոթ էր սիրված երգից: Եվ ուզում էի, որ այդ ծանոթությունը ճիշտ լինի, որ ցուցահանդեսը լավը լինի, ինքնատիպ լինի ու նոր:

Փոքր ու մեծ երկու ցուցասրահներում նկարները ներկայացված էին կոկ ու զուսպ: Իրոք, շնորհքով: Նկարների առաջնահայաց դիտումից անմիջապես պարզ էր, որ տեսնում ես հենց նրա նկարները, նրա երգ-նկարները, նրա՝ երգի հերոսուհու, թագուհու, աշխատավոր կնոջ, որ նստել է երեկ ու այսօր (գուցե մթի՝ անել խավարի մեջ) եւ ,- Չարենցի խոսքով ասած,-

*...գիշերվա խավարը ասեղնագործել*
*Անկարելի սիրով, տքնությունով անլուր,*
*Հաճախ անխոնջելի ճարտարությամբ,*
*Մանրակրկիտ, ինչպես հանելուկ,*
*Հրաշալի, ինչպես հարության*
*Զարմանալի լեգենդը...*

Մանրանկարի խստությամբ ու պարզությամբ, գրաֆիկական կառուցիկությամբ, գունային ներդաշնակությամբ եւ անուշությամբ այս պատկերաշարը ամբողջական է, ինքնատիպ. մեծ աշխարհի մի անկյուն է՝ միակն ու անկրկնելին, անփոխարինելի ու սրբորեն թանկ: Հիմնական թեման Բոլնիս Խաչենն է՝ շնչավոր, ընտանի, հարդաբույր, հարազատորեն դռնբաց, հողեղեն ու օդեղեն, մարդկային ոչ մի դեմք չպատկերած, բայց հումանիստական իր ողջ նյութով ու էությամբ:

Ի՞նչ է պատկերված:

Բնականության, ջերմության, հարազատության լույսով ողողված տուն է, շեն է, հայոց եզերք է: Վայելչատես, կատարելության ձգտող ու հասած տնտեսություն է, որ անճիգ մերվել է բնությանը, այնքան՝ որ թաքախում է նվիրում աշխատանքով, այնքան՝ որ լեցուն է սիրով՝ բնության, կյանքի, արդար գոյության:

Սա մի կտոր անեզր բնություն է, որ ջերմացնում է մեղմ շնչով ու անդորրով, շոյում է քաղցրությամբ ու հնամենիությամբ, ամոքում է փշոտ լարվածությունից եւ հաղորդում մարդկային գողտրիկ գոյության, մանկության, ճիշտ ապրելակերպի ու կյանքի, ստեղծագործ տքնանքի, արդար վաստակի ու զմայլուն խոնջենքի ներդաշնակության, մայր բնության ու մարդ արարածի հաշտ ու անանջատ գոյակցության, նրանց հոգատար փոխըմբռնման բերկրանք:

Եվ մեղմ բայց ամուր, ջերմ ու զուսպ գույներով, կարծես ոսկեղենիկ գրչով (բոլոր նկարներում կամ ծփում, կամ ցայտում, կամ առկայծում, կամ ցոլում է ոսկեդեղինը) այս նկարչությունը կարծես ասեղնագործություն է, հատկապես այդ նրբարվեստի ԼԻՑՔ կոչվող տեսակն է հիշեցնում:



*Սուրբ Վարդանը Բլրաշենից*

Գծիկ առ գծիկ, երանգ առ երանգ սկսվել է պատկերը, գրչածայրի հետքով շարունակվել ու վերափոխվել, օդից թե հայացքից, արյունից թե թանաքից, գրչածայրից թե մատներից գունամշուշ ու լույս է կաթել ամբողջ պատկերին, ողողել նկարը, որպես աուրա՝ լցվելով ու գումարվելով, համակել է սրահը եւ դարձել հոգեմիջուկ, դեպի հոգեհարազատություն տանող ուղի:

Նկարներից մեկում սանդուղքը ձեղուն է տանում: Բարձրացե՛ք՝ սիրուն ու հարազատ է հեռաստանը:

Մի ուրիշ նկարում բակ ու այգու դռնակը բաց է: Մտեք այս նուրբ նկարչության աշխարհը՝ հայտնության քաղցր լիցք կստանաք:

Հենվե՛ք կարմրավուն ժայռերին, լսե՛ք ձորակի առվի կարկաչը, խմե՛ք զուլալ ջրից՝ կզովանաք, կլիանաք անապականությամբ, հայրենիքի անփոխարինելիության անուշ ու վառման գիտակցությամբ:

Հասե՛ք ու բարձրացե՛ք լեռները, նայե՛ք վեր ու վար, նայե՛ք շուրջ բոլորը՝ գուցե կարողանաք ընդգրկել այդ աշխարհը, Հայաստան աշխարհը բովանդակող անուններից մեկը, այս դեպքում՝ Բոլնիս Խաչեն կոչեցյալ մասնիկը:

Նունուֆար Մինասյանը Բոլնիս Խաչենի ծնունդ է:

Տասնմեկ տարեկանից Երեւանում է:

Կրթությամբ ճարտարապետ է:

Երեք զավակների մայր է: Արդեն թոռատեր է:

Իր զարմանալի ամուսնու՝ Ռուբեն Հախվերդյանի կինն է, այսինքն՝ նա, ով «ունի մի սիրտ՝ ոսկուց էլ թանկ»:

ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

## Կայացավ Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը

Երեկ Կոմիտասի անվան երաժշտության տանը տեղի ունեցավ Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը:

Նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Վահան Մարտիրոսյանի** խոսքերով իր համար այս համերգը կարեւոր էր, քանի որ նվիրված էր մեծանուն երգեհոնահար Վահագն Ստամբուլցյանի հիշատակին: Վ. Մարտիրոսյանը միաժամանակ շեշտեց, որ մեծ պատիվ է նվագել 50 տարվա պատմություն ունեցող նվագախմբի հետ. «Շատ հաճելի է աշխատել նման պրոֆեսիոնալ եւ տաղանդավոր երաժիշտների հետ, ինչպես նաեւ ելույթ ունենալ հայ հանդիսատեսի համար», ասաց նա:

Համերգին մասնակցում էր երջանկահիշատակ Վահագն Ստամբուլցյանի աշակերտուհին՝ **Աննա Բակունցը**, ով «Կոնցերտ երգեհոնի եւ նվագախմբի համար» իր կատարումը նվիրեց հոր՝ Ակսել Բակունցի եւ իր ուսուցիչ Վահագն Ստամբուլցյանի հիշատակին:

«Ես մեծ հաճույքով եմ աշխատում Հայաստանի պետական կամերային նվագախմբի եւ հատկապես Վ. Մարտիրոսյանի հետ: Այստեղ առկա է առողջ ստեղծագործական միջավայր, ինչը շատ է նպաստում մեր համատեղ աշխատանքին», նշեց Ա. Բակունցը;

Համերգի ընթացքում հայ հանդիսատեսն ունկնդրեց Հայդնի «Դիվերտիմենտո Es Dur»-ն, որը հազվադեպ է կատարվում, Անտոնին Դվորժակի «Սերենադ»-ը, Հենդելի «Կոնցերտ երգեհոնի եւ լարայինների համար» ստեղծագործությունները:

«Ես ամեն անգամ գալիս եմ Կամերային նվագախմբի համերգներին, քանի որ դրանք դուրս են ընդունված ոճից, ձեւից, իսկ հանդիսատեսի հետ շփումը անբռնազբոս է, պարզ», կարծում է հանդիսատեսներից Անի Մարտիրոսյանը:

Համերգի վերջում հանդիսատեսի ջերմ ծափողջույնները նույնպես վկայեցին, որ նախորդ տարվա սեպտեմբերից ի վեր համերգի կայացման համար գործադրված ջանքերն իզուր չեն անցել:

Հայաստանի պետական կամերային նվագախումբ

Տեղեկանք

Հայաստանի պետական կամերային նվագախումբն ստեղծվել է 1962-ին, նվագախումբը պետական կոլեկտիվի կարգավիճակ է ստացել միայն 1966-ին:

2012 թվականին Հայաստանի պետական կամերային նվագախումբը նշում է իր բեղմնավոր գործունեության 50 տարին:

Նվագախմբի հիմնադրման, կայացման եւ թռիչքաձեւ զարգացման գործում անգնահատելի է նրա առաջին ղեկավարի՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Զարեհ Սահակյանցի դերը: Նրա անձի եւ անվան հետ են կապված նվագախմբի անհատական բարձրաճաշակ գեղարվեստական ոճի ձեւավորումը, երկացանկային հստակ դիրքորոշումը, ունկնդրի խանդավառ ընդունելությունը Հայաստանում, ԽՍՀՄ հանրապետություններում եւ արտերկրի համերգասրահներում: Ստեղծված կայուն ավանդույթները յուրովի զարգացրեցին եւ հարստացրեցին նվագախմբի հաջորդ շրջանների ղեկավարներ՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կոնստանդին Բաղդասարյանը (1975-ից), ՀՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Ահարոնյանը (1982-ից) եւ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Ղարաբեկյանը (1997-ից):

Նվագախմբի անցած ուղին այսօր ներկայանում է որպես տաղանդավոր կոլեկտիվի ծանրակշիռ ներդրում՝ Հայաստանում կամերային երաժշտական կուլտուրայի տարածման եւ արմատավորման գործում:

Հայաստանի պետական կամերային նվագախումբը ստեղծվել է կամերային երաժշտության նկատմամբ համընդհանուր հետաքրքրության եւ ուշադրության ժամանակաշրջանում: Ակնհայտ է, որ նա անցել է իրեն հասկացված ճանապարհի համեմատաբար դեռեւս փոքր մասը միայն: Սակայն կարեւոր է, որ այդ ճանապարհը խորապես գիտակցված է եւ հեռանկարը՝ տեսանելի:

ՄԱՐԻԱՄ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆ

## «Երկու անգամ երկու չորս չէ»

Երբ 5-ամյա Միերը ասֆալտին պառկած նկարում էր ու իր շուրջը հավաքում բակի «արվեստասեր» ընկերներին, հազիվ թե պատկերացներ՝ տարիներ անց գեղանկարչությամբ պիտի զբաղվեր ու հիացներ իրական արվեստասերների: Միերը սովորեց Հ. Կոջոյանի անվան դպրոց-ստուդիայում, Փ. Թերլեմեզյանի անվան դպրոցում, ապա ավարտեց Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան:

29-ամյա երիտասարդ նկարիչը հայրենիքում չէր եղել շուրջ 9 տարի: Ամերիկաբնակ գեղանկարիչը ցուցահանդեսներով հասցրել է հանդես գալ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում՝ Նյու Յորքում, Կանզաս քաղաքում, Մանհեթընում:

Հայ արվեստասերները Միերի աշխատանքներին առաջին անգամ ծանոթացան Նարեկացի արվեստի միությունում կազմակերպված «Իմ աշխարհը» խորագրով ցուցահանդեսի առթիվ:

Ցուցադրված 10-ից ավելի ստեղծագործությունները Միերի հետ երկար ճանապարհ են կտրել-անցել.

- Երեւանում ցուցադրելու համար ընտրել եմ ձեռագիրս առավելագույնս ընդգծող գեղանկարները, որոնք միաժամանակ ամենաքննարկվածներն են ազգությամբ ամերիկացի եւ գերմանացի արվեստագետների շրջանում,- բացատրում է նկարիչը:

Խոսքը Մեծ եղեռնի թեմայով արված գործերի մասին է: Ցեղասպանության թեմայի արծարծումը նկատելի է գեղանկարչի շատ գործերում: Ամեն տարի ապրիլի 24-ին Վաշինգտոնի ամենամեծ՝ Սուրբ Մարիամ հայկական եկեղեցում Միեր Խաչատրյանը հանդես է գալիս ցեղասպանության թեմայով ցուցահանդեսով:

- Նախորդ տարի ցուցահանդեսին ներկայացավ մի 106-ամյա կին, ով մազապուրծ էր եղել թուրքական ճիրաններից: Նրա հավանությունը երբեւէ ինձ տրված գնահատականներից ամենաթանկն է: Հասկանշական եւ ուրախալի է, որ այդ օրերին կազմակերպվող ցուցահանդեսներով հետաքրքրվում էին նաեւ մեծաթիվ օտարներ:

Միեր Խաչատրյանի գեղանկարների շարքում իրենց առանձնահատուկ տեղն ու դերը ունեն դիմանկարները: Այստեղ շեշտը բնորդի էությունը բացահայտելու վրա է.

- Դիմանկարով ես տվյալ անձի հոգեվիճակը, բնավորությունը, խառնվածքն եմ ուզում արտահայտել, որոնք ավելի խորն ու հետաքրքրական են, քան զուտ դիմագծերը: Արվեստի միակ օրենքը հետեւյալն է՝ արվեստում օրենքներ չկան: Արվեստում երկու անգամ երկու չորս չէ,- ասում է գեղանկարիչը:

Նարեկացի արվեստի միությունում ցուցադրված նկարներից մեկը նվիրված է Երեւանին ու պատկերում է Միերի ծննդավայրը, միայն թե գույները չափազանց մռայլ են...

- Մոխրագույնը կարոտի գույնն է: Մի քիչ էլ Երեւանն էի մոռացել... (ժպտում է): Ուրախ եմ, որ իրականում այն այսօր ավելի լուսավոր է: Կարոտս էլ առել եմ: Քաղաքիս նվիրված հաջորդ գործերս ավելի վառ կլինեն,- ասում է նկարիչը:

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Հայ ըմբիշները պատրաստվում են Եվրոպայի առաջնությանը


ՖՈՏՈԼՈՒՐ

Ազատ եւ հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականներն Ավանի ֆուտբոլի ակադեմիայի մարզադահլիճում շարունակում են նախապատրաստությունը Բելգրադում մարտի 4-10-ը կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Թեեւ առաջնությունում Լոնդոնի օլիմպիադայի ուղեգրեր չեն խաղարկվելու, սակայն մրցաշարը ուժերի հիանալի ստուգատես կլինի հայ ըմբիշների համար: Չէ՞ որ առջեւում Բուլղարիայում, Ֆինլանդիայում եւ Չինաստանում կայանալիք վարկանիշային մրցաշարերն են, որոնցում մեր ըմբիշները պետք է փորձեն ավելացնել օլիմպիական ուղեգրերի քանակը: Այսօրվա դրությամբ մեր ըմբիշներից առայժմ միայն 2-ն օլիմպիական ուղեգիր ունեն: Լոնդոնում հանդես գալու իրավունք են ստացել հունահռոմեական ոճի ըմբիշ Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ) եւ ազատ ոճային Միհրան Ջաբուրյանը (55 կգ):

Հայաստանի հավաքականի թեկնածուներն ամենօրյա քրտնաջան մարզումների միջոցով ձգտում են լավ մարզավիճակ ձեռք բերել, հղկում են գոտեմարտի վարման տեխնիկան, հնարքների կիրառումը: Նրանց գործողությունները ղեկավարում են հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը եւ ազատ ոճայինների գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդասյանը: Ըմբիշները մարզումները կշարունակեն մինչեւ մարտի 4-ը, որից հետո կուղեւորվեն Բելգրադ:

Լեւոն Ջուլֆալակյանն արդեն կողմնորոշվել է Եվրոպայի առաջնության մասնակից Հայաստանի հավաքականի վերջնական կազմի հարցում: Քաշային 7 կարգերում Հայաստանը կներկայացնեն Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր, Եվրոպայի չեմպիոն Ռոման Ամոյանը (55 կգ), Արթուր Մկրտչյանը (60 կգ), Արամ Ջուլֆալակյանը (66 կգ), Եվրոպայի չեմպիոն եւ աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ), Հրաչ Հովհաննիսյանը (84 կգ), Արթուր Ալեքսանյանը (96 կգ) եւ Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր, Եվրոպայի քառակի չեմպիոն, գերծանրքաշային Յուրի Պատրիկեեւը:

Իսկ ահա ազատ ոճի ըմբշամարտի ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդասյանն առայժմ հրապարակել է ընդլայնված կազմը: Թեկնածուների թվում են Գեղամ Բաբախանյանը, Միհրան Ջաբուրյանը (երկուսն էլ՝ 55 կգ), Արթուր Առաքելյանը, Նարեկ Սանոյանը (երկուսն էլ՝ 60 կգ), Դավիթ Սաֆարյանը, Ժիրայր Հովհաննիսյանը (երկուսն էլ՝ 66 կգ), Մուսա Մուրթազալիեւը, Սուրեն Մարկոսյանը (երկուսն էլ՝ 74 կգ), Հաջիմուրադ Նուրմագոմեդովը, Գեւորգ Ավշարյանը (երկուսն էլ՝ 84 կգ), Անդրանիկ Գեւորգյանը (96 կգ) եւ գերծանրքաշային Ռուսլան Բասիեւը:

# Ֆուտբոլի ՀՀ առաջնությունն աշխարհում 85-րդն է, Եվրոպայում՝ 41-րդը

Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է 21-րդ դարի արդյունքներով ազգային առաջնությունների դասակարգման ցուցակը: Հայաստանի առաջնությունն աշխարհում 85-րդ տեղում է: Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից ամենաուժեղ առաջնությունն ունի Ռուսաստանը, որը զբաղեցնում է 17-րդ հորիզոնականը: Հաջորդ տեղում Ուկրաինայի առաջնությունն է: Վրաստանի առաջնությունը 58-րդն է, իսկ Ադրբեջանինը՝ 93-րդը:



ՖՈՏՈԼՈՒՐ

21-րդ դարի աշխարհի ամենաուժեղ առաջնություն է ճանաչվել անգլիական պրեմիեր լիգան: Իսպանիայի առաջնությունը 2-րդ տեղում է, որին հաջորդում է Իտալիայի A սերիան: 4-րդ տեղում Բրազիլիայի առաջնությունն է: Լավագույն հնգյակը եզրափակում է Գերմանիայի Բունդեսլիգան: Լավագույն տասնյակում են նաեւ Ֆրանսիայի, Արգենտինայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի եւ Մեքսիկայի առաջնությունները:

Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան կազմել է նաեւ առանձին մայրցամաքների երկրների առաջնությունների վարկանիշային աղյուսակը: Եվրոպական առաջնությունների ցանկում Հայաստանը 41-րդ տեղում է ու գտնվում է Ալբանիայի եւ Իսլանդիայի հարեւանությամբ: 48 առաջնությունների ցանկը եզրափակում է Լյուքսեմբուրգը:

# Ռոբին վան Պերսիի աշխատավարձը կբարձրացվի ի հաշիվ Արշավինի

**Լոնդոնի «Արսենալի» գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը մտադիր չէ հրաժարվել թիմի գլխավոր «աստղ» Ռոբին վան Պերսիի ծառայություններից: Նա պատրաստ է «Անժիին» վաճառել Անդրեյ Արշավինին, որպեսզի այդ գումարն օգտագործի Ռոբին վան Պերսիի աշխատավարձը բարձրացնելու համար: Նոր պայմանագրով Ռոբին վան Պերսին հավանաբար դառնա «Արսենալի» պատմության մեջ ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը:**

**Ամռանը թիմից Սեսկ Ֆաբրեգասի եւ Սամիր Նասրիի հեռանալը թանկ արժեցավ «Արսենալին», որն ընթացիկ մրցաշրջանում անհաջող է հանդես գալիս: Անգլիայի առաջնությունում թիմը պայքարում է չեմպիոնների լիգայի ուղեգրի համար: Անգլիայի գավաթի եւ լիգայի գավաթի մրցաշարերում էլ «Արսենալն» արդեն դուրս է մնացել հետագա պայքարից: Շուտով թիմը հրաժեշտ կտա նաեւ չեմպիոնների լիգայի մրցաշարին, քանի որ 1/8 եզրափակիչի առաջին խաղում 0-4 հաշվով ջախջախիչ պարտություն էր կրել «Միլանից»:**

**Արսեն Վենգերը պատրաստ է Ռոբին վան Պերսիին 4-ամյա նոր պայմանագիր առաջարկել, որի ընթացքում ֆուտբոլիստը 18 մլն ֆունտ ստեռլինգ կստանա: Թեեւ ֆուտբոլիստի ներկայացուցիչները մտադիր են նոր պայմանագրի շուրջ բանակցել միայն մրցաշրջանի ավարտից հետո, սակայն ակումբի ղեկավարությունը ցանկանում է այդ հարցը շուտափույթ լուծել:**

**Թեեւ Արշավինը չի ցանկանում հեռանալ «Արսենալից», սակայն թիմի փոխարինողների կազմում հայտնվելը կարող է ազդել նրա որոշման վրա: Բացի այդ էլ Գուս Հիդինկը հիանալի հարաբերությունների մեջ է Արշավինի հետ ու պատրաստ է թիմ հրավիրել նրան:**



# Աբրահամի մրցակիցը Պյոտր Վիլչեւսկին է



**Միջինքաշային կարգում պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամը հերթական մենամարտը կանցկացնի մարտի 31-ին Գերմանիայի Կիլ քաղաքում: Արթուրի մրցակիցը 33-ամյա լեհ բռնցքամարտիկ Պյոտր Վիլչեւսկին է: Այդ մենամարտում կվիճարկվի Աբրահամին պատկանող WBO-ի վարկածով Եվրոպայի չեմպիոնի գոտին: Հիշեցնենք, որ այդ տիտղոսին Արթուրն արժանացել էր հունվարի 14-ին գերմանական Օֆենբուրգում արգենտինացի Պաբլո Ֆարիասին 5-րդ ռաունդում նոկաուտով հաղթելու համար:**

**Ինչպես հայտնի է, Արթուրը որոշել է աստիճանաբար քաշ գցել ու վերադառնալ իրեն հոգեհարազատ միջինքաշային կարգ (72,6 կգ): Ուստի նա ծրագրել է մի քանի մենամարտեր անցկացնել քաշային տարբեր կարգի բռնցքամարտիկների հետ: Օրինակ Ֆարիասի հետ մենամարտը կայացել էր 2-րդ միջինքաշային կարգի (76,2 կգ) շրջանակներում:**

**Պյոտր Վիլչեւսկին պրոֆեսիոնալ ռինգում 32 մենամարտ է անցկացրել, որից 30-ում հաղթել է, 2-ում պարտվել: Վերջին մենամարտը նա անցկացրել է օրերս՝ փետրվարի 17-ին հաղթելով Գեարդ Աժետովիչին: Արթուր Աբրահամը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 36 մենամարտերից շահել է 33-ը, կրել է 3 պարտություն:**

# Մխիթարյանը գոլի հեղինակ

**Դոնեցկի «Շախտյորն» ավարտեց ուսումնամարզական հավաքը Թուրքիայում «Անժիի» հետ մրցախաղով: Այդ խաղում իրեն լավ դրսեւորեց Հենրիխ Մխիթարյանը, որը 12-րդ րոպեին բացեց հաշիվը: Հետագայում Լուիս Ադրիանոն եւս 2 անգամ գրավեց «Անժիի» դարպասը: Ռուսական թիմն այդ գոլերին պատասխանեց միայն մեկով:**

# Հաղթական մեկնարկ

**Դավիթ Նալբանդյանը հաղթանակով մեկնարկեց Բուենոս Այրեսի թենիսի մրցաշարում՝ 6-2, 6-3 հաշվով պարտության մատնելով ԱՄՆ-ը ներկայացնող Ուեյն Օդեսնիկին: Հաջորդ փուլ են մտել նաեւ Ֆեռնանդո Գոնսալեսը, Ալբերտ Ռամոսը, Ժիլ Սիմոնն ու Իգոր Անդրեեւը:**

# «Միկան» հաղթեց սերբական թիմին

**Կիպրոսում ուսումնամարզական հավաք անցկացնող «Միկան» ստուգողական 2-րդ խաղում 3-1 հաշվով հաղթել է սերբական «Սլոբոդային»: «Միկայից» 2 գոլի հեղինակ է դարձել Արեգ Ազատյանը, մեկ անգամ էլ աչքի է ընկել Վարդան Մովսիսյանը:**

# «Ռեալը» ձեռքից բաց թողեց հաղթանակը

**Կայացավ չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի եւս 2 հանդիպում: Մադրիդի «Ռեալը» Մոսկվայում հյուրընկալվելով ԲԿՄԱ-ին, ձեռքից բաց թողեց հաղթանակը: Առաջին խաղակեսում Քրիշտիանու Ռոնալդուի խփած գոլին դաշտի տերերը պատասխանեցին լրացուցիչ ժամանակում, երբ աչքի ընկավ թիմի նորեկ Պոնտուս Վերնբլումը:**

**Լոնդոնի «Չելսին» տհաճ անակնկալ մատուցեց իր երկրպագուներին՝ Նեապոլում 1-3 հաշվով զիջելով «Նապոլիին»: Մինչդեռ առաջինը հաջողության էր հասել «Չելսին»: Սակայն հետագայում դաշտի տերերը 3 անգամ գրավեցին մրցակցի դարպասը եւ այժմ բավականին լավ հնարավորություն ունեն քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճելու: Այս պարտությունն ավելի վատթարացրեց «Չելսիի» գլխավոր մարզիչ Վիլաշ-Բոաշի վիճակը, որի աշխատանքից առանց այն էլ գոհ չէ Ռոման Աբրամովիչը:**

# Ռաուլը հավանաբար հեռանա Գերմանիայից

Բացառված չէ, որ իսպանացի հանրահայտ հարձակվող Ռաուլն ամռանը հեռանա «Շալկե-04»-ից: Պատճառն այն է, որ ֆուտբոլիստն ակումբի հետ առայժմ չի կարողանում համաձայնության գալ նոր պայմանագրի հարցում: Ռաուլը ցանկանում է նախկինի պես տարեկան 7 մլն եվրո աշխատավարձ ստանալ, մինչդեռ ակումբը պատրաստ է նրան միայն 4 մլն եվրո վճարել: Ներկա պահին Ռաուլով հետաքրքրվում են Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Քաթարի մի քանի ակումբներ:

# Նանիին շահավետ պայմանագիր կառաջարկվի

«Մանչեսթր Յունայթեդի» ղեկավարությունը պատրաստվում է նոր պայմանագիր առաջարկել թիմի կիսապաշտպան Նանիին: Նա մինչեւ 2014-ը գործող պայմանագիր ունի ակումբի հետ: Ակումբի ղեկավարությունը մտադիր է պայմանագրի ժամկետը երկարաձգել եւս 2 տարով ու Նանիին շաբաթական 130 հազար ֆունտ ստեռլինգ վճարել: Այդ դեպքում 25-ամյա ֆուտբոլիստը կդառնա «Մանչեսթր Յունայթեդում» ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստներից մեկը: Ներկայումս նրա աշխատավարձը շաբաթական 90 հազար ֆունտ ստեռլինգ է:

Նանին «Մանչեսթր Յունայթեդ» է տեղափոխվել 2007-ին պորտուգալական «Սպորտինգից» 18 մլն ֆունտ ստեռլինգի դիմաց: Թիմի կազմում պորտուգալացի ֆուտբոլիստն անցկացրել է 186 խաղ, խփել է 34 գոլ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Բութ են եւ «շատակեր»

*1-ին էջից*

Ըստ ադրբեջանական պաշտոնական տեղեկությունների, Խոջալուի «պաշտպաններից զոհվել է 160-ը, իսկ խաղաղ բնակիչներից՝ 613 մարդ»: Այդու, դեպքերի մասին «վկայություն» կարող էր տալ, այն էլ՝ 1992-ին, ոչ ավելի, քան 1000-1500 մարդ, եթե համարենք, որ մանկահասակ երեխաներն էլ «ցուցմունք են տվել»:

Էլման Մամեդովի եւ Աթաֆիշի Աթաֆիշիեւի ասուլիսը հասանելի է բոլորին, քանի որ դրա տեսագրությունը տեղադրված է Youtube-ում: /տես՝http://www.youtube.com/results?search–query/: Հանգամանքն ընդգծում ենք, քանի որ Ադրբեջանի զինդատախազությանը «հաջողվել է լիովին ապացուցել Խոջալուի «ցեղասպանությանը» 39 անձանց մասնակցությունը, որոնցից 18-ը 366-րդ գնդի զինծառայողներ են, 8-ը՝ «Խանքենդիի», 8-ը՝ Ասկերանի ՆԳ բաժինների աշխատակիցներ, 5-ը՝ այլ պաշտոնատար, եւ 8-ը՝ քաղաքացիական անձինք»:

Նշված անձանց «մեղքի ապացույց» կարող են ծառայել միայն «վկաների ցուցմունքները»: Էլման Մամեդովը եւ Աթաֆիշի Աթաֆիշիեւը լրագրողներին ասել են, որ «366-րդ գնդի զրահատեխնիկան Խոջալուն շրջապատել եւ կանգնել է 1-1,5 կիլոմետր հեռավորության վրա»: Նույնիսկ եթե հավատանք, որ ռազմագործողությանն իրոք ծանր զրահատեխնիկա ներգրավվել է, հիշյալ հեռավորությունից, այն էլ գիշերային մթության մեջ, որեւէ մեկը չէր կարող պարզել, թե դրանք ում են պատկանում, առավել եւս՝ ովքեր են ընդգրկված դրանց անձնակազմերում:

Նույն տրամաբանությամբ, Խոջալուի ոչ մի նախկին բնակիչ չէր կարող տեղյակ լինել գյուղ մտած հայ մարտիկների եւ հրամանատարների ինքնությանը: Առավել եւս՝ «պարզել», թե Աղդամից ընդամենը 2 կմ հեռավորության վրա գտնվող տեղանքին հարող «բարձունքներից», ինչպես նշված մամլո ասուլիսի ժամանակ վկայել է Էլման Մամեդովը, ովքեր են «գնդացրային կրակ բացել իրենց վրա» կամ «ում զրահամեքենան է փակել իրենց ճանապարհը»:

Խոջալուցիները կարող էին եւ կարող են միայն վկայել, թե ինչ հանգամանքներում են հայտնվել Ստեփանակերտում եւ Ասկերանում, որտեղ եւ ինչպես են պահվել, երբ, ում միջնորդությամբ եւ շփման գծի որ հատվածում են իրենց հանձնել ադրբեջանական կողմին: Այս դեպքում Ադրբեջանի զինդատախազությունը պետք է ցուցմունքներ վերցներ «պատանդ պահված», իրականում՝ Խոջալուի «պաշտպաններից» եւ ադրբեջանական իշխանություններից լիովին լքված, անտերության մատնված եւ միայն ԼՂՀ քաղաքացիական ու զինվորական իշխանությունների գթասրտության շնորհիվ ցրտահարությունից եւ սովից փրկված ու պատշաճորեն, առանց որեւիցե նախապայմանների ադրբեջանական կողմին հանձնված մարդկանցից:

Մենք մտադիր ենք առաջիկայում անդրադառնալ Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում ադրբեջանական կանոնավոր բանակի եւ ՆԳ նախարարության հատուկջոկատային ստորաբաժանումների գործած բռնություններին: Մինչ այդ հարկ ենք համարում Խանլար Վելիեւի ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ Ղազանչիից Աղդամին մերձակա Շահբուլաղ տեղանքի կալանավայր տարված խաղաղ բնակիչներից առնվազն 10 հոգու տանջամահության փաստն ապացուցված եւ արձանագրված է: Ադրբեջանական կողմն այդ մարդկանց հանդեպ գործադրել է ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների փորձը: Տարբերությունն այն է, որ նացիստները հրեաներին խոշտանգում էին գազախցիկներում, իսկ ադրբեջանցիները ղազանչեցի ծերունիներին կենդանի-կենդանի նետել են... Շահբուլաղի կրահորերը եւ նրանց հարազատներին վերադարձրել հանգուցյալների ածխացած ոսկորները միայն:

Ահա այդ եւ բազմաթիվ այլ հանցագործությունների կատարողներին պիտի պատասխանատվության ենթարկի Խանլար Վելիեւը: Նաեւ փորձի պարզել, թե իրականում ո՞րն է Խոջալուի դեպքերի մասին ստույգ տեղեկություններ ունեցած՝ նախորդ մեր հրապարակումներից մեկում թվարկած անձանց մահվան իրական պատճառը: Թե չէ տպավորություն է ստեղծվում, որ Ադրբեջանի իրավապահ մարմինները ոչ միայն բութ, այլեւ «շատակեր» են: Եվ միայն քաղաքական պատվեր են կատարում:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Միջազգային սերտիֆիկատներ՝ «Արդշինինվեստբանկում» Visa Staff Incentive ծրագրի հաղթողներին

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», 2011-ի երկրորդ կիսամյակի ընթացքում Visa International վճարահաշվարկային համակարգի հետ համատեղ բանկն իրականացրել է Visa Staff Incentive աշխատակիցների խրախուսման ծրագիր՝ ուղղված բանկի կողմից թողարկվող Visa International համակարգի պրեմիում սեգմենտի քարտերի վաճառքներին:

Փետրվարի 21-ին «Արդշինինվեստբանկում» տեղի է ունեցել Visa International վճարահաշվարկային համակարգի ներկայացուցիչների կողմից միջազգային սերտիֆիկատների հանձնման պաշտոնական արարողությունը: Ծրագրին մասնակցող լավագույն վաճառող է ճանաչվել «Երեւան» մասնաճյուղի աշխատակից Իրինա Ենոքյանը: Իսկ որպես թիմային աշխատանք լավագույն 3 մասնաճյուղեր են ճանաչվել «Մալաթիա», «Աղասյան» եւ «Գորիս» մասնաճյուղերը: Ծրագրին մասնակից «Արդշինինվեստբանկի» լավագույն աշխատակիցները Visa International վճարահաշվարկային համակարգի եւ բանկի կողմից խրախուսվել են նաեւ խոշոր դրամական պարգեւներով:

«Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ Մհեր Գրիգորյանը նշել է. «Visa Staff Incentive ծրագրի շրջանակներում ավելի քան կրկնապատկվեց պրեմիում սեգմենտի վճարային քարտերի վաճառքը: «Արդշինինվեստբանկի» պրեմիում սեգմենտի վճարային քարտերի բազմաթիվ ծառայությունների ու առավելությունների հետ մեկտեղ, ծրագիրը լրացուցիչ հնարավորություն ընձեռեց ամրապնդել եւ բարելավել բանկի դիրքերը պրեմիում սեգմենտի վճարային քարտերի շուկայում»:

**Ա. Մ.**

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Հողամասի մակերեսը /քմ/ | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սունդուկյան 2/5 | 141.2 | 196.4 | կաթսայատուն | 5 տարի | 70.0 հազ. դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձինք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ մարտի 9-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ մարտի 9-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

**ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ**

# Երեկ՝ չէ, այսօ՛ր

**«Ազգը» տեղեկացրել էր քանիցս, որ երեկ պետք է տեղի ունենար Հովհաննես Թումանյանի թիֆլիսյան բնակարանի մի հատվածի առք ու վաճառքի գործարքը, համաձայն այն տեղեկությունների, որ տարածվել էին Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի կողմից: Գործարքն, ըստ «Panorama.am»-ին Անանյանի փոխանցած տեղեկության, չի կայացել երեկ: Նոտարական գրասենյակում պարզվել է, որ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, վրացական օրենսդրության համաձայն, պետք է լինեն վրացերեն լեզվով: Երեկ անհրաժեշտ փաստաթղթերը տրվել են թարգմանության:**

**Այսօր արդեն նախատեսված է գործարքի կնքումը, որի համաձայն Թումանյանի բնակարանի չորս սենյակների վրացի սեփականատերը կստանա 145 հզ. ԱՄՆ դոլար, որը վճարելու պատրաստակամություն հայտնել էր Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանը՝ Ղուկասյան եղբայրների անունից:**

**Խոստումների համաձայն, հավանական է, որ վաղը հանրությանը կներկայացվեն նաեւ մի շարք հարցերի պատասխաններ, թե ինչու է նման գին որոշվել, ինչ է լինելու բնակարանի այդ հատվածի հետագա ճակատագիրը, ինչպես է իրականացվելու նորոգումը եւ այլն:**

**Ա. Հ.**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մարտի 5-ին, ժամը 12:00–ին ՀՀ ք. Երևան «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի Զվարթնոց օդանավակայանի տարածքում տեղի կունենա «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի Զվարթնոց օդանավակայանի տարածքում գտնվող 3 շենքերի քանդման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ամսվա առաջին տասնօրյակում, ժամը 10-ին, «Հայգազարդ» ՓԲԸ-ում ՀԳԱ 0006-12 ծածկագրով կանցկացվի ընկերությանը պատկանող, Հայաստանի Հանրապետության մարզերում եւ Երեւան քաղաքում գտնվող ապրանքա-նյութական արժեքների մրցույթ-վաճառք:

Հայտերը ընդունվում են «Հայգազարդ» ՓԲԸ-ում, մրցույթին նախորդող 10 օրերի ընթացքում: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի եւ սոց. քարտի պատճենները, իրավաբանական անձի եւ Անհատ ձեռներեցի դեպքում՝ պետ. գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ (010) 54-78-34, (010) 54-78-36 կամ այցելել «Հայգազարդ» ՓԲԸ՝ ք. Երեւան, Մյասնիկյան պողոտա, 5/1 հասցեով:

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արարատի մարզի Հայանիստ համայնքում հողի սեփականատեր Սամվել Լաբլաջյանի ձկնատնտեսական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 150,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2012 թ. փետրվարի 29-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*
**ՍԱՐԻ ԹԵՅ**
ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ
MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ
25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ
առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը
Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

# Հայաստանի լավագույն շախմատիստները կդասավանդեն «Կաիսա» նորաստեղծ շախմատի դպրոցում

Երեւանում բացվել է Շախմատի նոր դպրոց, որում երեխաների հետ կաշխատեն Հայաստանի հանրահայտ գրոսմայստերները՝ Օլիմպիական չեմպիոն Տիգրան Լ. Պետրոսյանը, Աշխարհի մինչեւ 20 տ. չեմպիոն Զավեն Անդրիասյանը, միակ հայ կին գրոսմայստեր Էլինա Դանիելյանը, ինչպես նաեւ Գեւորգ Հարությունյանը եւ Օլիմպիական չեմպիոն եւ մարզիչ Տիգրան Նալբանդյանը:

«Կաիսա» նորաստեղծ շախմատի դպրոցում դասընթացները վճարովի են եւ սկսվելու են մարտի 15-ից: Դիմումներն ընդունվում են փետրվարի 1-ից: Դպրոցի հասցեն է Նորքի II զանգված, Մոլդովական 5: Հեռախոս՝ 636513; 634009, 585094; 098 - 871967

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.2.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: